

ԲԺՇԿԱԴՆՏ Գ. ՄԵՎՐԱԲԵԱՆՑ

№ 6

ՏՈՒՐԵՐԿՈՒԼԵՐ

ԵՒ ՆՐԱ ԳԵՄ ԿՌՈՒՆԵԼՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՆԵԼԻ ՄԻ-
ՋՈՑՆԵՐ

Մոսկւայի Կայսերական Համալսարանի

սրբւատ դոցենտ **Դ. Դ. ՊԼԵՏՆԵՕՎԻ** յառաջարանով

ՀԱՆՐԱՄԱՏՆԵԼԻ

616.9

Մ-57

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեբասպարան օր. Ն. Ազանեանի, Պոլիս, 7
1913

28.06.2013

616.9

U-57

610

149-ՄԵ

43

պ.

ԲԺՇԿԱԴԵՏ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՅ

№ 6

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕԶ

ԵՒ ՆՐԱ ԴԵՄ ԿՈՌԻԵԼՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԻ-
ՋՈՑՆԵՐ

68207

Մոսկւայի Կայսերական Համալսարանի

պրիւատ դոցենս Դ. Դ. ՊԼԵՏՆԵՕՎԻ յառանձարանով



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլեկտրասպարան օր. Ե. Աղանեանի, Պոլից. 7
1913

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ԱՐՏԱՏՊԵԼՆ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԵՈՐԳԻ ԵՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

ՈՐԴԻԱԿԱՆ ԱԿԼԱԾՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԲՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Հ Ա Յ Գ Ր Ե Ր Ի Գ Ի Ի Տ Ի

ՀԱԶԱՐՀԻՆԳՀԱՐԻԻՐԱՄԵԱՅ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ

Յ Օ Ր Ե Լ Ե Ա Ն Ի

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Տուրերկուլիօզը ոչ միայն անհատական հիւանդութիւն է, որ կարող է դիպչել միայն հիւանդացած անձնաւորութեան ու նրա ընտանիքին, այլ և հասարակական մի ախտ է: Տուրերկուլիօզը ոչ միայն նպաստում է առանձին ընտանիքների մահանալուն, այլ՝ տանելով առանձին զոհեր, շնորհիւ իր քրօնիկական ընթացքին և վարակման ընդթիւն, այնպէս է ընթանում, որ հիւանդութիւնը տարածւում և արմատանում է հասարակութեան լայն շրջանների մէջ: Ընդգրկելով զոհերի նորանոր բայօններ, տուրերկուլիօզը տանում է մարդկութիւնը դէպի անկումն այն տեղերում, որտեղ նա խոր արմատներ է ձգել: Այսպիսի պայմաններում բժիշկների կազմը անկարող է մինակ տանել տուրերկուլիօզի դէմ մղւած կռիւը: Նրան պիտի միանայ ըստ կարելոյն ամբողջ ազգաբնակչութիւնը: Միայն այն ժամանակ կարելի է յուսալ, որ մենք կարող կ'լինենք, եթէ ոչ ամբողջովին արմատախիլ անել մարդկութեան այդ չարիքը, գոնէ սահմանափակել նրա ազդեցութեան շրջանը:

Տուրերկուլիօզի դէմ կռուելու համար հասարակութեանը առաջ քաշելու միջոցներից մէկն է՝ հիւանդութեան մասին գիտելիքներ տարածելը՝ ցուցահանդէսների, հրապարակային դասախօսութիւնների, բրօշուրների և այլ նման միջոցներով: Մեր գրականութիւնը շատ ազքատ է այդ տեսակ ժողովրդական գրւածքներով և բժպ. Գ. Գ. Մեհրաբեանցի բրօշուրը առաջնակարգ գլրւածքներից մէկն է մեր գրական ասպարէզում: Նա մի մեծ աջակցութիւն է տուրերկուլիօզի մասին գիտելիքներ տարածելու գործում, և ես հաճութեամբ համաձայնեցի գրել այս յառաջաբանը բժպ. Մեհրաբեանցի բրօշուրի համար: Տալով հանրամատչելի ձևով գիտական անհրաժեշտ տեղեկութիւններ, բրօշուրը միևնոյն ժամանակ նպաստում է աւելի գիտակցօրէն վերաբերել դէպի այդ հիւանդութիւնը, հասկանալ նրա էութիւնը և այն միջոցները, որոնց օգնութեամբ միայն հնարաւոր է բացիօնալ կռիւը տուրերկուլիօզի դէմ:

Դիմ. Պլեանիօվ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕՋ — ԹՈՒՔԱՆՏԸ ԵՒ ՆՐԱ ԴԷՄ ԿՈՌԻԵԼՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Բժշկապետ Գ. ՄԵՀԱՐԱՅԱՆՅԱՆ

I

ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕՋԻ ՄԱՍԻՆ

Տուբերկուլեօզը առաջանում է նրանից, որ մարդուս օրգանիզմի մէջ մտնում է որոշ հիւանդացնող թոյն: Բացի այդ՝ անհրաժեշտ է, որ վարակւած օրգանիզմը «տրամադրւած» լինի ընդունել այդ թոյնը և զարգացնել յետագայ հիւանդութիւնը:

Այդ «տրամադրութիւնը» կարող է լինել ժառանգական և ստացական: Ուրեմն տուբերկուլեօզի առաջացման համար հարկաւոր են՝ 1) հիւանդութիւն առաջ բերող պատճառներ և 2) օրգանիզմի ընդունակութիւնը՝ ենթարկւել այդ պատճառներին: Եթէ այդ պայմաններից մէկը ու մէկը բացակայում է, հիւանդութիւնը չի զարգանում:

Այն թոյնը, որ առաջ է բերում այդ հիւանդութիւնը, վերին աստիճանի մի փոքրիկ կենդանի էակ է (միկրօօրգանիզմ) և պատկանում է ստորին բուսականութեան:

Նրան կարելի է տեսնել միայն խոշորացոյցով (միկրօսկօպ): Koch-ը, որ գտել է այդ փոքրիկ սունկը, անւանել է նրան տուբերկուլեօզային բացիլ: Այդ բացիլը մտնելով մարդուս օրգանիզմի մէջ, կարող է տեղաւորւել զանազան մասերում. և նրա ներկայութիւնը մի գրաւական է զարգացնելու հիւանդութեան պրօցէսը, իսկ այդ պրօցէսը առաջ է բերում կորեկանման հատիկներ--իւրատեսակ մոխրանման ուռոյցքներ, որոնց շատ հեշտ կարելի է գտնել այն մարդկանց դիակների վրայ, որոնք մեռել

են տուբերկուլեզից: Այդ ուռուցքների-տուբերկուլներն ա-
նունով էլ հիւանդութիւնը կոչուում է տուբերկուլեզ, որ
նշանակում է կորեկահատ ցաւ:

Ինչպէս ասացինք, տուբերկուլեզը կարող է կանգ առ-
նել մարդկային մարմնի զանազան օրգաններում, բայց ա-
մենայաճախ նրանից վարակւում են թոքերը: Եւ թոքերի
տուբերկուլեզն է ամենքին յայտնի և սոսկալի կեր-
պով տարածւած հիւանդութիւնը, որը մեր առօրեայ կեան-
քում կոչում են քարակացաւ: Իզուր չէ տւած նրան այդ
անունը. այդ հիւանդութիւնը սովորաբար երկարում է և
քանի գնում՝ հիւանդը այնքան աւելի է նիհարում, ճար-
պը, նրա մարմնից ոչնչանում է, մկանունքները՝ ատրոֆի-
այի են ենթարկւում, հիւանդը բառիս բուն մտքով մաշ-
ւում, բարականում է:

Տուբերկուլեզ ասելով՝ մեր գրեթէ մէջ պիտի հաս-
կանանք թոքերի տուբերկուլեզը, թոքախտը, կամ բա-
րակացաւը:

Թոքախտի տարածումը

Այն հարցին, թէ որտեղ է տարածւած տուբերկուլեզը,
կարելի է կարճ պատասխանել. — «Ամեն տեղ»: Չկայ ոչ մի
երկիր, ոչ մի ազգ, որին խնայէր այդ հիւանդութիւնը.
բայց աւելի համաճարակի բնաւորութիւն ունի նա հիւսի-
սային կիսագնդի բարեխառն գօտիում: Մահացութեան
թիւը տուբերկուլեզից՝ Եւրոպական քաղաքներում ամեն
մի 10,000 մարդու վրայ բաժանւում է հետևեալ կերպով.

Փարիզ	38,1
Բուդապէշտ	38,0
Վեննա	32,9
Պետերբուրգ	29,8
Խրիստիանիա	26,9
Մոսկւա	24,1
Ստոկհոլմ	23,4

Բերլին	21,4
Կոպէնհագէն	21,3
Բրիւսսէլ	19,3
Հռոմ	17,7
Լոնդոն	14,5

(Изъ Вѣст. Гигіены 1905 г. на выставкѣ по борьбѣ
съ туберкулезомъ. Москва, 1910 г.)

1894 թւի Բուդապէշտի ժողովրդական առողջապա-
հական կոմիտեում պրոֆէսոր Leyden-ը ցոյց տւեց, որ
Գերմանիայում թոքախտով հիւանդ են 1,300,000 մարդ:
Այդ թւից տարեկան մեռնում են 170,000—180,000, որ
կազմում է $\frac{1}{7}$ ընդհանուր մահացութեան: Մեծ պատե-
րազմների կոտորածները այս թւերի հետ համեմատաբար
պիտի չնչին թւան: Օրինակ, 1870 թւի պատերազմի կո-
տորածները չեն կազմում մինչև անգամ քառորդը այն
մարդկանց, որոնք մի տարւայ ընթացքում զոհ են գնում
այդ էպիդեմիային:

Մեզ մօտ Ռուսաստանում դրութիւնը աւելի անմխի-
թար է. ամեն մի 10,000 բնակչի վրայ հաշւեգրած է
իրրև հիւանդ տուբերկուլեզով:

1895 թ.	21,1
1896 »	22,3
1897 »	22,8
1898 »	23,1
1899 »	25,4
1900 »	25,6
1901 »	27,7
1902 »	29,7
1903 »	29,8
1904 »	29,8
1905 »	30,7

(Изъ Вѣст. Общ. Гигіены 1905 г. на выставкѣ по
борьбѣ съ туберкулезомъ. Москва, 1910 г.)

Իսկ մեռնողների թիւը տուբերկուլեզից մի քանի քաղաքներում հասնում է հետեւեալ քանակութեան.

Նժ. Նովոգորոդ	34,07
Պետերբուրգ	30,04
Աստրախան	29,39
Մոսկւա	26,03
Նիկոլաև	25,30
Օդեսսա	25,09
Վարչաւա	24,44
Սարատով	23,07
Թիֆլիս	22,03
Վիլնա	19,60
Բազու	16,06

(Изъ Практ. Врача 1907 г. на выставкѣ по борьбѣ съ туберкулезомъ. Москва, 1910 г.)

Տուբերկուլեզի հասարակական-սնտեսական նշանակութիւնը

Թողնելով մի կողմ նոյն իսկ նրա սոսկալի տարածւելը, տուբերկուլեզը շնորհիւ իւր մեծ նշանակութեան հասարակական-տնտեսական տեսակէտից, մնացած ժողովրդական հիւանդութիւնների մէջ առաջնակարգ տեղ է բռնում:

Այս եզրակացութեանը գալիս ենք մենք՝ աչքի առաջ ունենալով հետեւեալը.

1) Մարդ թոքախտով հիւանդանում է իւր աշխատելու ընդունակութեան ամենալաւ հասակում: Հազար թոքախտաւորներից մեռնում են հետեւեալ հասակում.

Մինչև 5 տարեկանը	50 մարդ:
5-ից—10 } »	20 — 30 մարդ:
10-ից—15 } »	
15-ից—20 } »	200 — 250 »
20-ից—25 } »	

(Статистическія данныя проф. Gerhardt'a.)

2) Թոքախտից հիւանդանում է աւելի շուտ արական սեռը, որի բանւորական ոյժն աւելի ակնյայտնի է և աւելի կարևոր: Բերլինում 10,000 տղամարդուց 40—50 տարեկան հասակում ամեն տարի մեռնում են 101 մարդ, իսկ 10,000 կանանցից նոյն հասակում մեռնում են 44:

3) Թոքախտն աւելի շատ տարածւած է բանւորների և արհեստաւորների մէջ, որոնց բարեկեցութիւնը անմիջապէս կախւած է իրանց աշխատելու ընդունակութիւնից, իսկ այդ բանը կախւած է առողջութիւնից:

Սակայն այն պնդումը, թէ իբր թոքախտը սոսկալի կերպով տարածւած է ազգայնականութեան միայն աղքատ դասակարգերի մէջ, թէ իբր նա «պրօլետարների հիւանդութիւն» է, այդ ճիշտ չէ: Դրան հակասում են Ռուսաստան, Շւեդական և շատ ուրիշ թագաւորող քրօնիկօնները. և վերջապէս պատմութեան մէջ մենք գտնում ենք հակառակ փաստեր՝ Նապօլէօնի որդին, Լուդովիկոս XVI-ի որդին, Ռուսաց Գահաժառանգ Մեծ Իշխան Գէորգիյ Ալէքսանդրովիչ, Շիլլէր, Չերտով, Բէլինսկիյ, Դոբրոլիբով և ուրիշները, որոնք բոլորը մեռել են այդ հիւանդութիւնից:

4) Թոքախտը սովորաբար ընթանում է շատ դանդաղ, յաճախ ամբողջ տարիներ և շնորհիւ այդ ուրոյնութեանը՝ նա աւելի մեծ փլաս է հասցնում ժողովրդական բարեկեցութեանը: Շատ հեշտ է երեւակայել, թէ ինչպիսի ցաւ ու հոգսի մէջ է ընկնում մի ընտանիք, երբ նրան կերակրողը ոչ միայն շարաթներով և ամիսներով մնում է առանց աշխատանքի, այլ և նա պիտի օգտուի ուրիշի փողերով և աշխատանքով իրեն բժշկելու համար: Գերմանիայի հիւանդանոցային զրամարկոյները հիւանալի գիտեն, թէ ինչպիսի ծանր բեռ է ընտանիքի համար այդ անհրաժեշտութիւնը՝ մշտապէս պահել իր անդամներից մէկին:

5) Վերջապէս թոքախտը երևան է գալիս ոչ միայն իբրև «բարակացաւ», այլև առաջ է բերում մի շարք ուրիշ հիւանդութիւններ: Գայլացաւը, որ փշացնում է մարդու երեսը, ոսկորների դեղնուկը, ուղեղի մահացու բոր-

բորումը և երեխաների աղիքների վտանգաւոր փոփոխութիւնը — այդ բոլորը նոյն տուբերկուլեօզային բացիլի վարակման հետևանքն են:

Հասարակութիւնը և պետութիւնը տուբերկուլեօզի դէմ մաքրումն արժեքաւոր

Համաճարակի հանդէպ, որ այնքան ուժեղ կերպով փնտրում է ժողովրդական բարեկեցութեանը և ընդհանուր անհոգութիւնը, որ դեռ նկատուում է ժողովրդի մէջ, աւելի քան անհասկանալի է: Կամ թէ գուցէ դա որոշ հիմք ունի, գուցէ այդ անտարբերութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հլու հպատակութիւն յաւիտենական և անխուսափելի չարիքի առաջ:

Ո՛չ, հաղար անգամ ոչ...

Մարդը, որ կարողացել է յաղթել անցած դարերի ահարկու չարիքներին՝ ժանտախտին, ծաղկին և մասամբ խօլերային՝ այս դէպքում էլ վերջնականապէս անոյժ չէ: Բայց մի այսպիսի ուժեղ թշնամու դէմ կռուելու համար պետութեան ոյժերը բաւական չեն. պատերազմը նրա դէմ պիտի տարւի ամեն տեղ և ամեն ուղղութեամբ: Իսկական օգնութիւն կարող է տալ միայն ժողովրդի բոլոր խաւերի պլանօմէր աշխատանքը, երբ ամեն մի անգամ պատրաստ է աշխատել և զոհաբերութիւն անել ընդհանուր շահերի համար, որոնք կապւած են նրա սեփական շահերի հետ:

Բերլինի կոնգրէսն

Այս վերջին միտքը 1899 թւի Բերլինի տուբերկուլեօզային հարցին նւիրւած կոնգրէսի պատճառը եղաւ:

Այստեղ գլխաւոր ուշադրութիւնը դարձրած էր այդ հիւանդութեան վրայ, որի առաջին աշխատանքի պայմանն է դառնում նրա դէմ հեշտութեամբ կռուելը, բայց լաւ ապա-

դայի մենք կհասնենք միայն այն ժամանակ, երբ հասարակութիւնը ճիշտ գաղափար կունենայ տուբերկուլեօզի մասին, երբ նա ինքը կմշակի որոշ սկզբունքներ, որոնց վրայ հիմնելով առաջ կտանի կռիւը ընդդէմ մարդկութեան այդ մեծ չարիքի:

Այդպէս ուրեմն, նախ և առաջ անհրաժեշտ է հասարակութեան լայն խաւերին ծանօթացնել տուբերկուլեօզի և նրա դէմ գիտութիւնով մշակւած կռուելու միջոցների հետ:

II

ՀԻՒԱՆԴԱՅՆՈՂ ԹՈՅՆԸ

§ 1. Նրա բնոյթը և տարածումը:

Հիւանդութեան գրգռիչ պատճառները

Տուբերկուլեօզի գրգռիչ պատճառը, ինչպէս յիշւած է, ներկայացնում է առանձին մի բացիլ, որը երկարաձև ձողի է նման: Նրան կարելի է տեսնել միայն խոշորացրած դէպքում, այն էլ՝ եթէ նրան որոշ գունաւորում տանք: Իւր զարգացման և բազմանալու համար այդ սունկը կարօտ է որոշ հողի, որն այս դէպքում մարդու կամ կենդանու օրգանիզմն է: Այս «բնական սննդատու միջավայրից» դուրս՝ տուբերկուլեօզային բացիլը չի գտնում պայմաններ իւր զարգանալու համար: Սակայն այդ բարենպաստ պայմաններից էլ դուրս՝ նա կարող է ապրել որոշ ժամանակ և նորից տեղափոխւելով կենդանի օրգանիզմը, ինչպէս հարկն է զարգանալու ընդունակ լինել:

Հիւանդացնող քոյն պարունակողները

Ամեն մի թոքախտաւոր իր օրգանիզմում պարունակում է հիւանդացնող սաղմեր, սակայն չպիտի կարծել,

որ նա սարսափելի վտանգաւոր է շրջապատողների համար: Պիտի ընդունել իբրեւ հիմնական սկզբունք, որ հիւանդացնող սաղմերը օրգանիզմի միայն տեսանելի արտադրութիւններով կարող են անցնել մէկից միւսը և ոչ թէ անտես գոլորշիացումներով, որոնց հետ կուելը կարծես թէ անհնարին է (ինչպէս այդ յաճախ ընդունւած է):

Հիւանդութեան տարածումը

Հիւանդութեան տարածման աղբիւրները կարող են լինել՝

1) Հիւանդի թորերից առաջացած խորխը (мокрота) և նրա հետ խառնւած թութը (слизюна).

2) Գեղձախտաւորների (золотушные) և թոքախտաւորների վահրոտ խոցերը (ушесыпь), երբեմն նաև արտաթորութիւնը, մէզը և կաթը:

3) Թոքախտաւորների օրգանների մասերը և նրանց դիակները:

4) Բոլոր բնակարանները և իրերը, որոնք շփուած են թոքախտաւորների և նրանց դիակների հետ:

Յետոյ կարևոր է իմանալ, որ յիշւած առարկաները քանի ինքն իրենց խոնաւ են և գտնւում են հեղուկի մէջ, նրանց միջի սաղմերը օդի մէջ չեն անցնում: Իսկ եթէ նրանք չորանում են և փոշիանում, նրանց հետ միասին տուբերկուլեօզային ձողիկները ցրւում են ամենուրեք և վերջի վերջոյ նստում են յատակի, կահկարասիների և ուրիշ իրերի վրայ:

Փ ո ռ ի

Այստեղից պիտի եզրակացնել, թէ ինչքան լուրջ դեր է խաղում հիւանդութեան տարածման մէջ փոշին և ցեխը: Բացի այդ՝ դրան նպաստում են մասամբ և ճանճերը: Վերջինները հաճոյքով նստում են թքած խորխի վրայ և այդպիսով ցրւում նրա փոքրիկ մասնիկները, որոնք ի-

րենց մէջ կարող են տուբերկուլեօզային բացիլներ կրել:

Վախկոտ և կասկածոտ մարդիկ, մանաւանդ նրանք, որոնք հսկում են թոքախտաւորներին, կարող են հանգիստ լինել նրանով, որ թոքախտաւորների հետ շփուելը ինքնըստինքեան վտանգաւոր չէ: Բայց այդ գաղաւթ է վտանգաւոր, երբ հիւանդը իրեն զգոյշ չէ պահում, մանաւանդ իւր խորխի նկատմամբ: Եւ իսկապէս, թոքախտաւորների սենեակներում, որտեղ բոլոր արտադրութիւնները ինչպէս հարկն է ոչնչացւում են, համարեա երբեք չէք գտնի տուբերկուլեօզային բացիլ: Իսկ ուրիշ պայմաններում այդ բացիլները անպայման գոյութիւն ունեն:

Ներկայումս 40 մարդուց մէկն է տուբերկուլեօզով հիւանդ, և այդ հիւանդը շատ հազիւ է պատահում, որ զգոյշ լինի իրեն արտադրութիւնների հետ. խորխի ամեն մի գնդակը կարող է պարունակել 300,000,000 բացիլ (պրօֆ. Heller):

Այդ պատճառով շատ հասկանալի է, թէ ինչքան մեծ քանակութեամբ են առաջանում նրանք ամեն մի ժամում և չպիտի զարմանալ, որ հիւանդացնող թոյնը գտնւում է ամենուրեք, ուր ապրում են մարդիկ, մանաւանդ այնտեղ, ուր նրանք հաւաքւում են մեծ թւով, ինչպէս եկեղեցիներում, ուսումնարաններում, պանդոկներում և այլն:

Կենդանիների «մարգարտային հիւանդութիւնը» („Жемчужная болѣзнь“)

«Մարգարտային հիւանդութիւնը», որ տարածւած է մեր տնային կենդանիների մէջ, ներկայացնում է իրենից նոյն տուբերկուլեօզը: Նրա բացիլները ուռոյցքների ժահրի հետ հեշտ կերպով տարածւում են ծծերի (вымя) վրայ և վարակում կաթը:

§ 2. Հիւանդացնող թոյնի տեղափոխումը մարդու վրայ:

Հիւանդացնող թոյնը կարող է ընկնել մեր օրգանիզմը հետեւեալ ճանապարհներով՝

- 1) Շնչառութեան միջոցով,
- 2) Անմիջական վարակումով,
- 3) Կերակրի միջոցով:

Ո Ղ Ը

Հիւանդացնող սաղմերը ամենից յաճախ անցնում են մարդուն այն օդով, որը նա ներս է շնչում: Հէնց այդ պատճառով է, որ աւելի շուտ հիւանդանում են շնչառութեան օրգանները: Ինչպէս արդէն ասացինք, տուբերկուլեօզային բացիւնները փոշու փոքրիկ մասնիկների հետ անցնում են օդի մէջ, որը փակւած բնակարաններում երբեք ազատ չի լինում նրանցից: Արևի ճառագայթում, որը թափանցում է մութ սենեակի մէջ որեւէ ճեղքւածքով, մենք միշտ տեսնում ենք օդի մէջ լողացող անթիւ քանակութեամբ փոշիներ:

Բաց օդում հիւանդութեան սաղմերը ցրւում են ամեն կողմ, վերին աստիճանի նօսրանում են և հեռաւապէս վտանգաւոր չեն: Տուբերկուլեօզը մեր նորագոյն կուլտուրական կեանքի հիւանդութիւն է, մի կեանքի, որ ստիպում է մարդկանց օրւայ մեծ մասը ծածկւած բնակարաններում անցկացնել: Քանի գեռ Ամերիկայի Հնդկները, ինչպէս որսորդական ազգ, չլուծ էին մի տեղից միւս տեղ, թոքախտը նրանց բոլորովին անյայտ էր, ինչպէս անյայտ է նա մինչև օրս դաշտավայրերի Կիրգիզներին և անապատների Նօմադներին: Ամբողջ ժամանակ բաց օդում բնակւելով, նրանք ազատ էին հիւանդութեան սաղմերն ընդունելուց: Բայց հէնց որ նրանք իրենց վրանները փոխեցին մշտական բնակարանների և յարաբերութեան մէջ մտան վարակւած օտարերկրացիների հետ, տուբերկուլեօզը նրանց մէջ սկսեց իր հունձն անել:

Թոյնի անմիջական տարածումը

Հիւանդութեան անմիջական տարածումը առաջ է գալիս ճիշտ այնպէս, ինչպէս առաջւայ ժամանակներում ծաղկի անցնելը մէկից միւսը: Վարակւելու համար գլխաւորապէս հարկաւոր է, որ մարդու մարմնի վրայ վէրք լինի. թէկուզ շատ չնչին. այլապէս վարակում չի կարող առաջ գալ, որովհետեւ թոյնը անփաս կաշւից անցնել չի կարող: Թոյնը տարածւում է համբոյրի, կծելու և նման հպումների միջոցով: Դէպքեր շատ են եղել, երբ ըստ մահմէդական սովորութեան՝ թոքախտաւոր վիրաբոյժը (операторъ) թլփատման ժամանակ իւր հիւանդութիւնով վարակել է երեխային:

Տուբերկուլեօզային այն ուռոյցները, որ տեսնում ենք անդամահատական բաժանմունքներում ծառայողների ձեռքերի վրայ, ինչպէս նաև մարգարտաախտ ունեցող կովեր կթողների, լւացարարների և գերձակների մատների վրայ, ցոյց են տալիս, որ աշխատելու ժամանակ թոյնը աննկատելի կերպով մտել է նրանց կաշւի տակ: Անկասկած է նոյնպէս, որ մեծ կապ կայ երեխաների մատները կրծելու և նրանց կաշւի տուբերկուլեօզի մէջ: Այս երևոյթը նկատւած է ժողովրդի կողմից:

Օլդենբուրգի դքսութեան մէջ այն երեխաներին, որոնք քչփորում են իրենց քթերը, նկատում են՝ «Տես, քթիդ մէջ արջ գուրս կգայ»: Մենք էլ կարող ենք երեխաներին վախեցնել գայլով (գայլացաւով):

Կերակրային մթերքներ

Տուբերկուլեօզային բացիւնները ուտեստի մթերքների մէջ մտնում են գլխաւորապէս կաթի միջոցով, որ ստացւում է մարգարտաախտ ունեցող կովերից: Վարակումը մսի միջոցով աւելի հազւագիւտ է և եթէ լինի էլ, այդ



կարելի է այն ժամանակ, երբ հիւանդութիւնը շատ է զարգացած և առաջ գնացած: Ընդհանրապէս կերակրային մթերքներից վարակելու վտանգը մեծ է: Ստամոքսային թթու հիւթը, աղիքների մէջ զարգացող ուրիշ միկրօօրգանիզմների մրցումը ոչնչացնում են տուբերկուլեօզային այն բացիւնները, որոնք պատահամբ ընկնում են մարդու ստամոքսի մէջ: Բայց և այնպէս աղիքների տուբերկուլեօզի ծագումը կարելի է բացատրել նրանով, որ գործածւելիք կաթի մէջ կան տուբերկուլեօզային ձողիկներ: Բացի այդ, այն թոքախտաւորները, որոնք կուլ են տալիս իրենց խորիւր, շատ յաճախ հիւանդանում են աղիքների տուբերկուլեօզային վէրքերով: (Справиться „Туберкулезъ кишекъ, какъ первичное заболѣваніе“ Д-ра Меграбянца. 1909 г. С.-Петербургъ).

§ 3. Տուբերկուլեօզի վարակիչ լինելը:

Հարկւր տարի առաջ ժողովրդի մէջ թոքախտն ընդունւած էր իբրեւ վարակիչ հիւանդութիւն: Բայց այն փաստից յետոյ, երբ տեսան, որ հիւանդների հետ շփւելը շատ քիչ դէպքերում է հիւանդացնում առողջներին, եկան այն սխալ եզրակացութեան, թէ թոքախտի տարածման մէջ վարակումը ոչ մի դեր չի խաղում: Բժիշկների մեծամասնութիւնը, իհարկէ, շարունակում էր կռիւ մղել այդ սխալի դէմ: Բայց և այնպէս շատ յաճախ նկատւում էր, թէ ինչպէս թոքախտաւոր ամուսինը վարակում իւր կնոջ, իսկ թոքախտով հիւանդը իրեն խնամող մարդուն:

Մերանում սպասուհիները, որ խնամում էին եկուոր հիւանդներին, առաջներում շատ շուտ էին մեռնում թոքախտից, չնայած, որ նրանց ընտրում էին առողջ և ուժեղ Տիրօլեան ընտանիքներից (Pirchler): Նոյնը հաստատեց պրօֆ. Ziemssen-ը Բաւարիայի գթութեան քոյրերի վերաբերմամբ:

Թոքախտի վարակչութիւնը հաստատում է և փորձընդհանրապէս ամեն մի կենդանի տրամադրւած տուբերկուլեօզին, վերջ ի վերջոյ վարակում է, եթէ նա ստիպւած լինի երկար ժամանակ ներշնչել թոքախտաւորներից առաջացած փոշիացած գոլորշիացումները: Հազւագիւտ չեն այնպիսի դէպքեր, երբ երիտասարդ բժիշկները և լաբօրատօրային ծառայողները զոհ են գնացել սրան: Այս բոլոր փաստերը աչքի առաջ ունենալով՝ անհրաժեշտ է ընդունել, որ տուբերկուլեօզը վարակիչ է և հիւանդից առողջին անցնելը միանգամայն ապացուցւած: Ներկայումս համարեա բոլորի կողմից ընդունւած է իբրեւ ճշտութիւն Koch-ի և ուրիշ հետախոյզների հետեւալ դրութիւնը. «վարակումը առաջ է գալիս այն տեղից, որտեղ կան տուբերկուլեօզային բացիւններ. այդտեղից արդէն վարակում է ամբողջ մարմինը և զարգացնում տուբերկուլեօզը»:

III

ՕՐԳԱՆԻԶՄԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕԶԻՆ

§ 1. Բացիւնների օրգանիզմի մէջ մտնելը նրան միշտ չի վարակում:

Ինչպէս արդէն ասացինք, տուբերկուլեօզը ամենատարածւած հիւանդութիւններից մէկն է: Հիւանդների զանազան օրգաններով դուրս է շարտւում բացիւնների անագին քանակութիւն: Վերջապէս տուբերկուլեօզը անպայման վարակող է: Եւ եթէ այդ այդպէս է, բնականաբար ծագում են նոր հարցեր. ինչո՞ւ ուրեմն մարդիկ աւելի մեծ թւով չեն հիւանդանում, երբ նրանց մեծամասնութիւնը այդպէս յաճախակի ենթարկւած է վարակման վտանգին: Ինչո՞ւ բժիշկները, գթութեան քոյրերը և այլն և այլն, գտնւելով միշտ թոքախտաւորների հետ յարաբերութեան մէջ, չեն հիւանդանում աւելի շատ, աւելի յաճախ:

Առաջին հայեացքից այս հարցերին պատասխանելը կարծես թէ շատ դժւար է: Սակայն հետեւեալ օրինակը կարող է պարզել գործի էութիւնը և ցոյց տալ միայն վարակման նշանակութիւնը, այսինքն թէ ինչպէս է թոյնը մտնում օրգանիզմի մէջ: Համեմատենք տուրբերկութեօզային բացիլը որ և է բոյսի սերմի հետ, չէ՞ որ նա իրենից ստոր բուսական օրգանիզմ է ներկայացնում: Չոր աւազոտ հողի վրայ սերմ չի կարող բսնել, դրա համար հարկաւոր է լաւ և պարարտ հող: Այդ դեռ բաւական չէ. եթէ սերմը գցենք ձմրան ժամանակ, ամենալաւ հողն անգամ անընդունակ կլինի սերմն աճեցնել: Այդ պատճառով է, որ գիւղացին պարարտացնում և մշակում է հողը, որպէսզի սերմից առաջացող բոյսը գտնի իւր համար թէ ջերմութիւն և թէ կերակուր:

Գիւղացին տարւայ հարկաւոր ժամանակին է հերկում և սերմում և խնամք է տանում, որ սերմերը ծածկւած լինեն բարենպաստ հողով: Նոյնը պէտք է ասել և տուրբերկութեօզի վերաբերութեամբ: Ինչպէս որ սերմը չի զարգանայ աւազի վրայ, նոյնպէս և տուրբերկութեօզը չի կարող զարգանալ միմիայն թոյնի օրգանիզմի մէջ մտնելով. դրա համար հարկաւոր է որ մարդու մարմնի մէջ այդ թոյնը գտնի որոշ տեղ, ուր պայմանները նրան չխանգարեն մնալ միշտ, զարգանալ և տարածւել ամենուրեք: Թէ ինչպէս և ինչ պայմանների մէջ են տուրբերկութեօզային բացիլները գտնում այդ տեղը, այդ պարզ կլինի այն ժամանակ, երբ մենք ընդարձակօրէն կուսումնասիրենք թէ վարակման ճանապարհները և թէ այն խոչնդոտները, որ առաջ է դնում օրգանիզմը բացիլներին դէմ:

Օրգանիզմի բնական և պաշտպանողական ոյժեր

Մարդու շնչառական ուղիների մէջ ներշնչող օդի միջոցով մտնում են փոշու մասնիկներ, նրանց հետ միասին և հիւանդութեան սաղմերը: Այդ փոշու մեծ մասը

պահւում է քթի փոսիկների թաղանթով, որի միջով անցնում է ներշնչող օդը, յետոյ կորչում է խնչելու ժամանակ: Քթի նշանակութիւնը, որպէս փոշու ֆիլտր, շատ մեծ է, բայց և այնպէս փոշու ամենափոքրիկ մասնիկները թափանցում են շնչառական օրգանների խորքերը: Բայց միկրօօրգանիզմների համար առողջ թաղանթը ներկայանում է որպէս անյաղթ խոչնդոտ. նրանք պահւում են մաղասով-բղամով (СЛИЗЬЮ) և՛ շնորհիւ շնչափողերի ներքին երեսը ծածկող վերին աստիճանի բարակ մազերի շարժումներին՝ անընդհատ վեր են բարձրանում ու անհետանում հազալու ժամանակ: Իսկ եթէ մաղասային թաղանթը՝ օրգանիզմի այդ խիւղական պաշտպանը, վնասւած է, այն ժամանակ դռներ են բացւում հիւանդութեան սաղմերի թափանցելու համար:

Սակայն այս դեռ բոլորը չէ. արեան և մարմնի հիւսւածքների աղիւսակներն էլ ներկայանում են որպէս վերջին պաշտպանողական գիծ, որի առաջ միկրօօրգանիզմները մեռնում կամ անփնաս են դառնում: Կուր մէջ ոյժը միայն այն դէպքումն է անցնում հիւանդութեան կողմը, երբ թուլանում են օրգանիզմի բնական պաշտպանողական ոյժերը, մի բան, որ կարող է կախւած լինել ընդհանուր թուլութիւնից, արեան պակասութիւնից և ուրիշ շատ փնասակար ազդեցութիւններից: Ի հարկէ, բացիլները աւելի շատ են յաղթում, եթէ նրանք գալիս են նորանոր ոյժերով և այն էլ մեծ քանակութեամբ: Ընդմիշտ տեղաւորւելով օրգանիզմի մէջ, նրանք շատ շուտ են բազմանում և թոքերի հիւսւածքների վրայ առաջ են բերում խորը աւերումներ:

Տուբերկութեօզին տրամադրւած լինելը

Այդպիսով մենք տեսնում ենք, որ տուրբերկութեօզի ծագման համար, բացի հիւանդութեան գրգռիչ պատճառներից, անհրաժեշտ է նաև օրգանիզմի որոշ կազմը, մի

բան, որ նպաստում է հիւանդութեան ընդունելութեան և նրա զարգացման: Օրգանիզմի այդ առանձին դրութիւնը մենք անւանում ենք տուբերկուլեօզը ընդունելու «տրամադրութիւն»: Դա կարող է լինել ժառանգական և միշտ աննպաստ պայմաններ կարող են առաջացնել տրամադրութիւն դէպի թոքախտը:

Այդ դրութիւնը գտնւում է մեր օրգանիզմի կամ ներքին կամ արտաքին պայմանների ազդեցութեան տակ:

§ 2. Տուբերկուլեօզի ժառանգականութիւնը

Ամենօրեայ փորձը ցոյց է տալիս, որ թոքախտը երեւան գալով որեւէ ընտանիքում, սովորաբար անցնում է ժառանգներին, թէպէտ և այս պարագայում երբեմն խնայւում են ամբողջ սերունդներ: Ամուսնութեան միջոցով հիւանդների հետ թոքախտը կարող է անցնել մինչև այդ առողջ ցեղին: Ժառանգականութեան նշանակութիւնը անվիճելի է, սակայն մեծ մասամբ նրան հասկանում են բոլորովին սխալ: Տուբերկուլեօզը շատ հազիւ է անցնում երեխային ծնւելու հետ: Այդպիսի դէպքեր նկատւում են միայն այն ժամանակ, երբ մօր հիւանդութիւնը արդէն շատ է առաջ գնացել:

Այդպիսի դէպքերում երեխաները մեռնում են շատ շուտ: Իսկ առհասարակ ժառանգականութեան մէջ ոչ թէ հիւանդութիւնն է անցնում, այլ դէպի հիւանդութիւն տրամադրւած լինելը, որը և արտայայտւում է թուլութիւնով և շնչառական օրգանների քիչ զարգացումով:

Habitus

Թոքախտաւորների ժառանգները հէնց իրենց արտաքինով շատ բնորոշ պատկեր են ներկայացնում, որին մենք բժիշկներս տուբերկուլեօզային habitus անունն ենք տալիս: Սրա յատկանիշերն են՝ երկար, վերնի մասում բարակոյ,

կրծքի վանդակը, որի կողերի մէջ նկատւում են լայն տարածութիւններ, թեւաձև տարածւող թիկունքները, տափակ և շնչառութեան ժամանակ քիչ շարժւող կուրծքը: Այնուհետև վերին աստիճանի սպրդնած և փափուկ կաշին, որի վրայ նկատւում են կապոյտ դամարներ, մատների ծայրերը հաստացած, որ վերջանում են շատ ծուռ եղունգներով, խղերի գոյնն էլ դալկակապոյտ:

Պարզ է, որ այսպիսի կազմի տէր մարդիկ յաճախ զոհ են գնում թոքախտին: Սակայն շատերը ազատւում են, եթէ իրենց հեռու են պահում վարակումից և առհասարակ հսկում են իրենց առողջութեան վրայ:

Առհասարակ պիտի ասել, որ այն երեխաները, որոնց ծնողները յղացման ժամանակ տառապելիս են եղել մաշող հիւանդութիւններով (բակ, սիֆիլիս, արբեցողութիւն և այլն), շատ քիչ են ընդունակ դիմադրելու տուբերկուլեօզին: Դժւար է ասել, թէ ամեն մի առանձին դէպքում ինչը պիտի վերագրել ժառանգականութեան և ինչը վարակման: Այսպէս՝ եթէ մի ընտանիքում, որտեղ ծնողները հիւանդ են, թոքախտով հիւանդանում է երեխան, մենք ճիշտ չենք կարող ասել՝ ժառանգական է հիւանդութիւնը, թէ ծնողներից է վարակւել երեխան:

Բայց վերջինն աւելի հաւանական է: Յամենայն դէպս թոքախտի տարածման մեղքը չի կարելի միանգամայն ժառանգականութեան վրայ բարձել և աչքաթող անել ուրիշ աւելի կարևոր պատճառները:

§ 3. Ստացական տրամադրութիւնը դէպի հիւանդութիւնը:

Այն ամենը, ինչ որ փնտրւում է մարդու առողջութեան, միևնոյն ժամանակ նպաստում է տուբերկուլեօզի առաջացման: Ասածներս նախ և առաջ վերաբերում են շնչառական օրգաններին: Այն ֆակտորները, որոնք թու-

լացնում են նրանց ընդունակութիւնը հիւանդութեան դիմադրելուն, հետեւեալներն են. —

1) Մըսելը, խիստ քամիները, ցուրտ և խոնավ օդը, այս ամենը մաղասային թաղանթները բորբոքման դրութեան են հասցնում և հեշտացնում դրանով հիւանդութեան առաջանալու գործը:

2) Յաճախ և երկար մնալը փչացած մթնոլորտում (տրակտիրներ, նեղ սենեակներ և այլն) նոյնպէս առաջացնում է մաղասային թաղանթի կատար:

3) Փոշի ներշնչելը: Մանաւանդ փաստակար է այն փոշին, որը բաղկացած է սուրանկիւն մասնիկներից, որովհետեւ նրանք խոցոտում են մաղասային թաղանթը և երկարատեւ գործողութիւնից զրկում են նրան խաղացող մագներից գոյացած պաշտպանող ծածկոյից:

4) Շնչառական օրգանների և թոքերի ամեն մի բորբոքում: Թոքերի բորբոքումից, պլեւրիտից, կօկլիւշից, կարմրուկից և հարբուխից յետոյ տուբերկուլեօզը շատ հեշտ է զարգանում:

5) Կրծքի ազատ և բնական զարգացման դէմ բոլոր խոչընդոտները (նեղ կօրսեաները, մարմնի ծուռ դրութիւնը և այլն) այս բոլորը խանգարում են ազատ զարգացման, արեան առաջ ընթացութեան և թոքերի մաքրելուն: Բացի այդ, օրգանիզմը թուլացնող բոլոր հիւանդութիւնները (շնորհիւ ջերմի, արեան կորստի) նոյնպէս թուլացնում են տուբերկուլեօզային բացիլների հետ կռելու ընդունակութիւնը:

Ալիօնօլիզմ (արբեցողութիւն)

Ալիօնօլիզմը տուբերկուլեօզի տարածման գործում ներկայանում է որպէս ջերմ գործակից: Ֆրանսիական բժիշկները պնդում են, որ բոլոր թոքախտաւորների 90% առաջներում եղել են արբեցողներ: Հնեում Նօրմանդիայի և Բրիտանիայի ընտանիքները պարծենում էին իրենց ա-

ռողջութիւնով և առատ սերնդատուութեամբ: Բայց այն օրից, երբ նրանց մէջ տարածեց արբեցողութիւնը, նա իր հետ բերեց և թոքախտը, այն էլ ամենափաստակար տեսակը:

1000 մարդուց թոքախտով հիւանդանում են՝

շատ խմողներ 27%

չափաւոր խմողներ 10%

չխմողներ 3%

(П. Якубъ. Диссертация С. П. Б. 1891 г.)

Սա մի ահարկու նախադրուշացում է, որի վրայ ամենքն իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն:

Յամենայն դէպս, եթէ կայ որոշ տրամադրութիւն դէպի թոքախտը, ոչինչ այնքան չի սաստկացնում նրան, ինչքան ալիօնօլիզմը: Արբեցողը ոչ միայն իրեն առողջութեանն է փաստում, այլև նա վտանգաւոր է իրեն շրջապատողների համար, որովհետեւ արբած դրութեան մէջ ոչ մի զգուշութիւն գործ չի դնում (օր. հազալու, խորխը թքելու ժամանակ):

§ 4. Պրօֆէսսիա:

Այն դերակշռութիւնը, որ տալիս է տուբերկուլեօզը որոշ պրօֆէսսիայով պարապող մարդկանց, վաղուց է յայտնի և հաստատուած թւանշաններով:

Հողագործութիւն և արդիւնաբերութիւն

Սակսօնիայում տուբերկուլեօզով հիւանդացողներն ստանում էին կենսաթոշակ՝

10.000 ապահովագրւած երկրագործներից . . . 77 մարդ

» » բանւորն. և արհեստ . . . 245 »

Արևելեան և արևմտեան Պրուսիայում, որտեղ ազգաբնակչութիւնը գլխաւորապէս պարապում է երկրագործու-

թեամբ, 10,000 մարդկանց մէջ թոքախտով հիւանդացողները կազմում են 14,1 — 14,3: Բէյնի և Վեստֆալիայի շրջաններում նրանց թիւը բարձրանում է մինչև 28,0 — 30,1: Զինւորների մէջ, որոնք ռազմական պաշտօն են վարում, հիւանդացողների թիւը աւելի քիչ է քան արհեստաւորների մէջ: Վիճակագրութիւնը հաստատում է փոշու նշանակութիւնը տուբերկուլեզի տարածման մէջ: Այն բանւորների մէջ, որոնք պարապում են փոշու հետ կապ չունեցող գործով՝ մեռնողների թիւը հետեւեալ ձևով է արտայայտւում 2,39 : 1000: Հակառակ դէպքում մեռնողների թիւը բարձրանում է մինչև 5,42 : 1000: Մանաւանդ վնասակար են հետեւեալ պարապմունքները՝

1) Որոնք պահանջում են նիւթի վերամշակում. այդ նիւթը պարունակում է հիւանդացնող սաղմեր (հնածախսեր (старьевщики), լւացարարներ, դերձակներ, հիւանդապահներ):

2) Այն պարապմունքները, որոնց ժամանակ փոշի ներշնչելը անխուսափելի է լինում: Ամենից վատ է մետաղի փոշին (պղնձագործները, երկաթագործները): Զօլինգենում յղկողները (шлифовальщики) 40 տարեկան հասակից վեր՝ համարեա կիսով չափ թոքախտից են մեռնում: Նոյնն է նաև քարտաշների, քանդակագործների և յախճապակեայ գործի բանւորների վերաբերեալ, բոլորն էլ ստիպւած են հանքային փոշի ներշնչել, Վերջապէս օրգանական փոշին սոսկալի թւերով մեռնողներ է առաջ բերում՝ ծխախոտային, թղթի, բրդի և նոյնանման գործարանների բանւորների մէջ:

3) Այնպիսի պարապմունքներ, որտեղ պարապելու ժամանակ մարմնի դիրքը թոյլ չի տալիս թոքերին ազատ և կանոնաւոր լայնանալ շնչառութեան ժամանակ (գրագիրներ, կօշկակարներ, ատաղձագործներ և այլն):

4) Այնպիսի պարապմունքներ, որոնք մեծ մասամբ պահանջում են անկանոն և աննօրմալ կեանք (սպառաւորներ, արակտիրներն տէրեր):

Այս պարապմունքների մեծամասնութեան հետ կապւած են նաև ուրիշ վնասակար ազդեցութիւններ (փոշու ներշնչելը, նստակեաց կեանքը, ալկօհօլի ի չարը գործ դնելը): Տարաբախտաբար մարդիկ մասամբ տգիտութեամբ, մասամբ աններելի թեթեամտութեամբ նպաստում են հիւանդացնող սաղմեր ընդունելուն և առողջութեանը վնասակար կենցաղով ստեղծում են թոքախտի զարգացման համար բարենպաստ պայմաններ: Ախտը վերջապէս դառնում է մի չարիք, երբ, ինչպէս այդ լինում է արագ աճող քաղաքներում, ազգաբնակչութեան խաւերի դիմադրական ոյժերը թուլանում են լոյսի և օդի պակասութեան, բնակարանների կեղտոտութեան ու նեղութեան, վատ կերակրւելու և զանազան անհափաւորութիւնների պատճառով:

IV

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԳՐԳՈՒՉ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՒ ՎԱՐԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԴԵՄ ՄՂԻՈՂ ԿՈՒԻԸ

Այն հին սկզբունքը՝ թէ «աւելի հեշտ է հիւանդութեան առաջն առնել, քան նրան բժշկել», ճշմարիտ է տուբերկուլեզի վերաբերմամբ: Այդ պատճառով ամենից առաջ պիտի ուշադրութիւն դարձնել ոչնչացնելու այն ամենը, ինչ որ կարող է նպաստել վարակման: Իսկ դրա համար հարկաւոր է ոչնչացնել հիւանդութեան գրգռիչ պատճառները: Քանի այդ պատճառները քիչ լինեն, այնքան էլ քիչ կլինի վարակման վտանգը:

Բայց ինչ միջոցով մենք կարող ենք ոչնչացնել տուբերկուլեզոյային բացիւնները: Նրանք շատ կենսունակ են. մինչև անգամ ամբողջ շաբաթներ, նոյնիսկ ամիսներ օրգանիզմից դուրս պահպանում են իրենց կենսունականութիւնը, նայած թէ ինչ դրութեան մէջ են գտնւում նրանք, չոր թէ թաց: Նրկար ժամանակ նրանք կարողանում են տանել զրօյից ցած ջերմութիւն:

Տուբերկուլեոզային բացիլների ոչնչացումը բարձր ջերմու- թեան միջոցով

Թաց միջավայրը տաքացնելով (օր. եռացնելու ժա-
մանակ) տուբերկուլեոզային բացիլները 5—10 րոպէսում
մեռնում են: Բայց չոր տաքութիւնը (մինչև անգամ ե-
թէ դա հասնի 140°—160°) բացիլները երկար ժամանակ
կարող են տանել: 50°—60° տաքութիւնը, որ նկատուում
է արևի կիզիչ ճառագայթների տակ, բաւականաչափ նոս-
մացնում է նրանց փնտաւարութիւնը և կենսունակութիւնը:

Քիմիական նիւթեր, որոնք սպանում են տուբերկուլեոզա-
յին բացիլները

Մի քանի քիմիական նիւթեր, ինչպէս սուլէմայի
1 : 1000 խառնուրդը, կարբօլեան թթուի 50 : 1000, լիզօ-
լայի 100 : 1000, թէպէտ շատ շուտ են սպանում սաղմե-
րը, բայց ամենուրեք գործածելու համար շատ թունաւոր
են: Այդ միջոցներն են, որ պիտի գործածեն այն տեղ,
որտեղ ենթադրուում է միկրօօրգանիզմների ներկայու-
թիւնը: Բայց տարաբախտաբար բացիլների դէմ կուելու
համար մենք չենք կարող օգտուել այդ նիւթերից հիւան-
դութեան սկզբնական վայրում, այսինքն հիւանդի օրգա-
նիզմում, որովհետև վերջինը անկարող է տանել այդ թոյնը:
Նոյնը պէտք է ասել և բարձր աստիճանի տաքութեան վե-
րաբերմամբ, որ անհրաժեշտ է բացիլները սպանելու համար:

Հիւանդների արտաթորութիւնների վարակման դէմ կուե-
լու նպաստակայարմարութիւնը

Եթէ ներկայումս մենք անկարող ենք թոքերի կամ
միւս օրգանների մէջ գտնուող բացիլները ոչնչացնել, փո-
խարէնը մենք ունենք հնարաւորութիւն նրանց առաջն
առնել մի օրգանիզմից միւսը անցնելու ժամանակ: Տու-

բերկուլեոզի տարածման դէմ կուելու համար գլխաւոր
ուշադրութիւնը պիտի դարձնել հիւանդների արտաթորու-
թիւնների ախտահանութեան վրայ, մանաւանդ խորխի վրայ:

Այն օրից, երբ Պրուսիայում այդ միջոցը գործա-
դրուում է լայն չափով, թոքախտից մեռնողների թիւը ըն-
կել է՝

31,4—10,000-ից 1889 թւին

մինչև 21,8—10,000-ից 1897 թւին:

Բաւարիայում և Աւստրիայում, ուր ոչ մի նախա-
դգուշացման միջոցներ ձեռք չէին առնուում, թւերի այդ-
պիսի պակասում չի նկատուում: Իսկապէս, մենք ունենք
հետևեալ թւերը.

Բաւարիայում՝ 1889 թ.—33,4. 1897 թ.—30,0 : 10.000

Աւստրիայում՝ 1881 թ.—38,5. 1894 թ.—37,3 : 10.000:

Խորխի պաշտպանելը փոփանալուց

Ի՞նչպէս անփառ դարձնել թոքախտաւորի խորխը:
Մեզ յայտնի է, որ նա վտանգաւոր է դառնում այն ժա-
մանակ, երբ չորանում է ու փոշիանում: Այդ վտանգը
կարելի է հեռացնել շատ հասարակ կերպով բոլոր բնա-
կարաններում, մանաւանդ այնտեղ, ուր յաճախում են մեծ
քանակութեամբ մարդիկ, ինչպէս ուսումնարաններում,
եկեղեցիներում, ընտանիքներում և այլն, պիտի դրւած
լինեն թքամաններ, որոնց մի երրորդականը պիտի լցւած
լինի ջրով:

Յատակի վրայ թքելու տեղ և վտանգաւոր սովորու-
թիւնը պէտք է վերացնել:

Ամերիկայում ամեն մի թքելուն մի դօլլար տուգանք
է տրուում: Ոչ մի պատուաւոր մարդ չի յարգանա իրեն
շրջապատողների՝ իրեն թոյլ չի տայ այդպիսի բան: Ու-
սումնարաններում և ընտանիքներում երեխաներին այդ
ուղղութեամբ պիտի կրթել: Թոքախտաւորը, եթէ թքում
է ամեն պատահած տեղ, դրանով փնտաւում է ոչ միայն

իրեն շրջապատողներին, այլև իր սեփական առողջութեան: Դրանով նա կարող է յետ ներշնչել արտաքսած բացիւնները և վարակել իր թոքերի առողջ մասերը:

Թճամաններ

Որպէս թճամաններ, աւելի լաւ են ֆարֆորային տափակ ամանները. կարելի է և գործածել ծաղկամանների տակեր: Թճամանները միշտ պէտք է ունենան իրենց մէջ ջուր, որը պիտի թափել ամեն օր կամ կրակի կամ արտաքնոցի մէջ: Ողողելով ամանը տաք ջրով, նրա մէջ պէտք է ածել նոր ջուր: Տունը հաւաքող սպասաւորը այդ գործից յետոյ իւր ձեռքերը պիտի լանայ սապնով: Թաշկինակները երբէք չպիտի ծառայեն խորիւ կամ թուր մաքրելու համար, որովհետեւ վերջիններն աւելի շուտ են չորանում և հիւանդութեան սաղմերը անցնում են օդի մէջ:

Մեծ և գոյնզգոյն թաշկինակները վատ են ընդհանուր մաքրութեան տեսակէտից: Բաց օդում խորխն այնքան վտանգաւոր չէ: Այդ դէպքում հիւանդութեան սաղմերը իսկոյն ցրւում են ահագին տարածութեան մէջ:

Ինչ պիտի անել այն առարկաները, որոնց գործածել եւ թոփախաւորները

Կասկածաւոր տեղաշարային պիտոյքների հետ շատ զգոյշ պիտի լինել: Այդ բոլոր իրերը կարելի է ուրիշին տալ միայն լաւ մաքրելուց յետոյ: Նախ և առաջ փոխնորդները չպիտի բացօդեայ մնան. պէտք է պահել առանձին պահարանում, որը պիտի յաճախ լանալ տաք ջրով և սապնով:

Անհրաժեշտ է միշտ զգուշացնել լաւացարաններին, դերձակներին, արհեստաւորներին, երբ նրանք որևէ գործ են ստանում թոքախտաւորներից:

Կասկածաւոր բնակարանները կարելի է բռնել միայն

լաւ մաքրելուց յետոյ: Հէնց միայն այս պատճառով ցանկալի կլինէր տուբերկուլեօզի յայտնւելու դէպքում տեղեկացնել, ուր հարկն է. այն ժամանակ ամեն մէկս կիմանայինք, թէ որտեղ մեզ պիտի զգոյշ պահենք:

Առարկաների եւ բնակարանների ախտահանութիւնը

Շորերը և տեղաշորի պիտոյքները ախտահանութեան պիտի ենթարկել այսպէս կոչւած՝ «ախտահանական կամէրներում», որոնք այժմ կան համարեա բոլոր մեծ քաղաքներում:

Այդ բանի համար կան մարդկանց շտատներ, որոնք պարապում են բացառապէս բնակարանների ախտահանութեամբ: Նման հիմնարկութիւններ հարկաւոր է հաստատել նաև փոքրիկ քաղաքներում: Սակայն նրանցից օգտուելը թանգ չպէտք է լինի, որովհետեւ դա արգելք կլինէր նրանց ժողովրդականացման:

Մաքրութիւն

Սակայն հասարակ միջոցներով էլ կարելի է շատ բաների համար: Լանալու առարկաները մաքրւում են երկար եփելուց: Փայտեայ կարասիները, յատակները, իւղաներկ պատերը պէտք է մաքրել տաք ջրով և սապնով, պաստառները հացի փշրանքներով, իսկ անարժէք իրերը պէտք է վառել: Թաւշեայ կարասիները, գորգերը, վարագոյրները, մահճակալները և այլ ուրիշ առարկաներ կարող են ախտահանւել չոր տաքութիւնով: Բայց սաղմերից մաքրւելուն ամենից լաւ օգնում է իրերի լաւ ծեծւելը, բաց օդում քամու տալը:

Առհասարակ պէտք է ասել, որ «ջուրը, թարմ օդը և լոյսը տուբերկուլեօզային բացիւնների ոխերիմ թշնամիներն են, և ժողովրդին մաքրապահութեան սովորեցնելը յառաջադիմական մի մեծ քայլ է»: Անդլիայում մեծ օգուտ

բերին «բնակարանների ազատ տեսուչները»։ նրանք հրահույժ էին ազգաբնակչության աղքատ դասակարգերի բնակարանների վրայ և տալիս էին անհրաժեշտ ցուցմունքներ։

Վարձավճար բնակարանները, ննջարանները անհրաժեշտ է ամեն օր մաքրել, իսկ շաբաթը մէկ անգամ լւանալ։ Թողը, որ պատում է բնակարանի ամբողջ կարասիները, հարկաւոր է մաքրել ամեն օր թաց շորով։

Տարեկան մի քանի անգամ հարկաւոր է արևի տակ հանել և մաքրել կարասիները և մահճակալները։

Անմիջական վարակման դէմ մաքառելու միջոցներ։

Թոփախսաւորների հետ յարաբերութիւն ունենալը

Թոքախտաւորների հետ յարաբերութիւն պահելն անվտանգ է, եթէ հիւանդը ենթարկւում է որոշ պահանջների և սահմանափակումների։ Նա չպիտի շոյի և համբուրի ուրիշներին։ Հազալու, յօրանջելու և ծիծաղելու ժամանակ նա, ինչպէս և ամեն մի բարեկիրթ մարդ, բերանը պիտի թաշկինակով կամ ձեռքով ծածկի, որպէսզի ուրիշների վրայ չընկնեն նրա թուքի մասնիկները։ Ծնողները, ծրմայրերը և դայեակները պիտի զգոյշ լինեն հիւանդ երեխաների հետ։

Թոքախտաւորները ուրիշների հետ միասին միևնույն առարկաներից չպիտի օգտւեն, մանաւանդ մահճակալներից։ Այստեղ պիտի յիշել ճաշի սպասքը, գրչակոթերը (ոմանք նրանց կրծոտում են), գրադարանների գրքերը։

Փոքր երեխաներին չպիտի թոյլ տալ ամբողջ ժամանակը յատակի վրայ չորեքթաթ տալ և բերան վերցնել ամեն ինչ։ Նրանց եղունգները պիտի կտրել և ձեռքերը պահել մաքրութեան մէջ։ Կարմրուկից, կօկիւշից, պլերիաից և թոքերի բորբոքումից առողջացողներին թոքախ-

տաւորներից հեռու պիտի պահել։ Ոչ միայն իրեն, այլև շրջապատողների շահերի տեսակէտից թոքախտաւորը պիտի առանձին ուշադրութիւն դարձնի մարմնի, շորերի և բնակարանի մաքրութեան վրայ։ Եղունգները, գլխի մազերը, միրուքը և բեխերը պիտի կտրւեն կտրւած լինեն։

Կերակրի մթերքների միջոցով վարակելու դէմ միջոցներ

Կաթնատների տէրերը և առհասարակ անասուններով արդիւնաբերողները պիտի խնամք տանեն արմատախիլ անել մարդարտային ախար։ Դրա համար նրանք իրենց անասունները պիտի արածեցնեն ըստ կարելւոյն բաց օդում, պատրաստեն լալի և արձակ գոմեր և՛ որ գլխաւորն է՝ հիւանդ անասուններին առանձնացնեն։ Յանկալի են պարբերական անասնաբուժական այցելութիւնները։

Սպանդանոցի և մսավաճառների գործունէութեան կանոնաւորումը օրէնքի կողմից, պետական կօտրօլը այն հիմնարկութիւնների վրայ, որոնք պարագում են կաթնատնտեսութեամբ և պանրագործութեամբ, կարող կլինէին հանգստացնել ամենակատկածոտ մարդկանց։ Բայց մեզանից ամեն մէկը կարող է իրեն այդպիսի վարակումից հեռու պահել, եթէ չխմի հում կաթ և չուտի հում կամ կիսահում միս։

V

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԻԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՍ ՄԻՋՈՑՆԵՐ

Շատ երկար ժամանակ մեր նպատակը պիտի լինի հիւանդութեան սաղմերի կատարեալ ոչնչացումը, իսկ մինչև նրան հասնելը դեռ շատ ժամանակ կանցնի։ Չնայած թքամանների գործածութեան, մենք դեռ երկար ժամանակ բուսականաչափ կընէրչնէնք տուբերկուլեօդային բացիւններ։

Բնդհանուր հսկողութիւն առողջութեան վրայ

Այս հիման վրայ հարկաւոր է ձգտել մարդու օրգանիզմի դիմադրական ոյժի հարստացման և առողջութեան:

Բժիշկները միշտ պիտի սովորեցնեն, թէ ինչ միջոցով կարելի է դրան հասնել, իսկ ժողովուրդը պարտաւոր է լրջօրէն հետևել նրանց ցուցմունքներին:

Վաղաժամ ամուսնութեան նետեւանքը

Հին գերման ժողովրդի սովորութիւնը՝ հասուն ժամանակ պսակել՝ որից ծնում էին առողջակազմ և ուժեղ երեխաներ, պատմագիր Տացիտուսը ժողովրդական ոյժի անհատ աղբիւր է անւանում: Տարաբախտաբար այդ խելօք սովորութիւնը չէ մնացել մինչև մեր օրերը: Հէնց ամենաաղքատ դասակարգերում, որտեղ վատ կերակրւելու պատճառով պատանեկութեան զարգացումը ուշ է աւարտւում, ընդունւած է վաղաժամ ամուսնութիւնը: Մինչդեռ նոյնիսկ ամենաթուլակազմ երիտասարդութիւնը հէնց որ ազատւում է գինեորական ծառայութիւնից, միւս՝ աւելի առողջ մասից շուտ է ամուսնանում: Պարզ է, որ բոլորովին չզարգացած և այն էլ թոյլ հայրերից առողջ երեխաներ չի կարելի սպասել, մանաւանդ՝ եթէ ընտանիքը, ինչպէս յաճախ պատահում է, նիւթապէս վատ է ապահովւած: Առհասարակ տղամարդիկ 28 տարուց առաջ չպիտի պսակւեն, իսկ կանայք 20 տարուց:

Պսակը ազգականների մէջ

Հայ լուսաւորչական և յունադաւան եկեղեցիների արգելքը՝ պսակել ազգականների հետ՝ մի լաւ միջոց է պահպանելու ժողովրդական առողջութիւնը: Մի քանի տեղեր, ինչպէս, Օլդէնբուրգի Միւնստերլանդի Վուրստենում, որտեղ բացառապէս կաթոլիկներ են ապրում, թոքախտի

չափազանց տարածւելը մասամբ կարելի է վերադրել և նրան; որ գիւղացիները հարիւրաւոր տարիներ ընթացքում ամուսնութիւնը սահմանափակել են իրենց մէջ, որով և անհնարին է եղել նոր արեան մուտքը:

Թոմասաւորները կարո՞ղ են ամուսնանալ

Ամերիկայում աշխատում են ամուսնանալու հարցը կապել առողջութեան համար տւած վկայականի հետ: Յամենայն դէպս, աչքի առաջ ունենալով, ժառանգականութեան նշանակութիւնը, հարկաւոր է անային բժշկի խորհուրդը հարցնել և տալ նրան վճռական նշանակութիւն: Եթէ որեւէ կողմից հիւանդութիւնը պարզ կերպով որոշւած է, այն ժամանակ ժառանգութեան շահերի տեսակէտից հարկաւոր է արգելել պսակը, մանաւանդ՝ եթէ վարակւած է կինը (ստեղծագործող կողմը): Իսկ եթէ հիւանդ են և փեսացուն և հարսնացուն, այն ժամանակ, ինչպէս փորձը ցոյց է տուել, երեխաները շատ շուտ են մեռնում թոքախտից: Բացի այդ, հիւանդներին հարկաւոր է բացատրել, որ հիւանդութեան պրօցէսի վրայ ամուսնութիւնը վատ ազդեցութիւն է ունենում: Կինը այդ պարագայում աւելի մեծ վտանգի է ենթարկւում: Եւ սակայն մինչև օրս գոյութիւն ունի այն նախապաշարմունքը, թէ ամուսնութիւնը պահպանում է հիւանդանալուց այն երիտասարդ աղջկանց, որոնք տրամադրւած են տուբերկուլեօզի: Ընդհակառակը: Ծննդաբերութիւնը, կրծքով կերակրելը և ընտանեկան յուզումները—այս բոլորը այնպիսի պայմաններ են, որոնք հեշտ նպաստում են տուբերկուլեօզի ծագման և նրա ծանր ընթացքին: Անհրաժեշտ է նախազգուշացնել և առողջ կողմը: Շատ անգամ են բժիշկները նկատել, թէ ինչպէս հիւանդ ամուսինը վարակել է իւր մինչև այդ առողջ կնոջ, և ընդհակառակը:

Տուբերկուլեզի ծագման նպաստող պատճառների հետա-
ցումը

Քանի մարդ խիստ է հետևում առողջապահական կա-
նոններին և քանի աւելի է ուշադրութիւն դարձնում ամեն
տեսակ աւելորդութիւններից խուսափելուն, այնքան նա
քիչ է ենթարկւում թոքախտով հիւանդանալու վտանգին։
Սակայն այս դէպքում մեր ժողովրդի սովորութիւնները և
բարքերը կարօտ են հիմնական բարեփոխութեան։

Կերակուելը

Մարդու օրգանիզմի առողջութեան և կանոնաւոր
զարգացման գլխաւոր պայմանը նպատակայարմար և բա-
ւականաչափ կերակուելն է։ Կերակուելը պիտի լինի խա-
ռը, այսինքն կազմւած կանաչեղէնից և մրգեղէնից՝ աւե-
լացրած համապատասխան քանակութեամբ միս։ Տարա-
բախտաբար մեր տանտիկիներէից շատ քչերը ճիշտ զա-
ղափար ունեն, թէ ինչ նշանակութիւն ունի կերակրային
մթերքների կանոնաւոր գործ ածելը։ Մայրերը պիտի աշ-
խատեն իրենց աղջկանց կրթել որպէս խելացի տանտի-
կիներ։ Մի քանի քաղաքներում բացւած տնայնագործա-
կան և խոհարարական ուսումնարանները միանգամայն
համապատասխանում են հասարակական անհրաժեշտ պա-
հանջին։

Ընդհանրապէս ասած՝ ընդարձակ տեղ պիտի տալ կա-
նաչեղէնի գործածութեան։

Մեր զիւղացիները իրանց աղքատութեան պատճա-
ռով սննդւում են ոչ-խելացի կերպով. շատ հազիւ է պա-
տահում, որ նրանք ուտեն և՛ կանաչեղէն և՛ թարմ միս։
Գիւղացիները վաղուց են նկատել այն փաստը, որ դան-
դաղ որոճող ձիերը անհամեմատ աւելի լաւ են օգտուում
իրենց կերածից։ Նոյնը և մարդիկ. կերակուելը դանդաղ և
լաւ ծամելուց նրանք աւելի մեծ օգուտ են քաղում։ Բացի

այդ, նրանք չեն վախենում կոկորդում ընկնելու կերակու-
րը և այդպիսով խուսափում են թոքերի մէջ կողմնակի բան
մտցնելու վտանգից, որ կարող է լուրջ բորբոքման պատ-
ճառ լինել։

Բնակարանային հարցը

Գիւղերում և փոքր քաղաքներում թոքախտը անհա-
մեմատ քիչ է նկատւում՝ քան մեծ կենտրոններում։ Քա-
նի աւելի շատ լոյս և շատ օդ է ընկնում ամեն մէկիս,
այնքան քիչ է հիւանդութեան թիւը։ Այդ պատճառով է,
որ բնակարանային հարցը ահագին նշանակութիւն ունի։
Սակայն այս հարցի դրութիւնը դեռ ամեն տեղ շատ վատ
է, մանաւանդ մեծ և շուտ զարգացող քաղաքներում։ Այն-
տեղ, օդից և լոյսից զրկւած նկուղներում (камерка) գտնւում
ենք իսկական տուբերկուլեզային բներ։ Անհրաժեշտ է այս
հարցի կանոնաւորումը օրէնքի կողմից և միանգամայն ան-
հրաժեշտ է նաև վերջ դնել այն նեղութեանը, որ նկատուում
է, օրինակ, պաշտօնական ապաստանարաններում։ Հարկա-
ւոր է եռանդուն կերպով պաշտպանել հասարակական հիմնը-
ւող միութիւնների սկզբունքները և խրախուսել հասարա-
կական կապիտալների գործածելը՝ բանւորների համար ա-
ռողջ բնակարաններ շինելու։ Մինչև անգամ միջին բուր-
ժուական դասակարգերում շատ քիչ է տարածւած գողտ-
րիկ և առողջ բնակարաններ ունենալու գաղափարը։ Անդ-
լիացին ասելով՝ «իմ տունը, իմ ամրոցն է», ամբողջ ու-
շադրութիւնը դարձնում է իր օջախի բարեկեցութեան
վրայ։ Ահա, ինչու Անգլիան տուբերկուլեզային ստատիս-
տիկայով ամենանախանձելի դրութեան մէջ է։ Իսկ մեզ
մօտ ոչ մի բանի համար փող չեն խնայում, բայց բնա-
կարանը ընտրելու դէպքում նկատուում է անխելք տնտե-
սութիւն։ Բնակարանում նախ և առաջ պէտք է բաւա-
կանաչափ լոյս և օդ լինի։ Իգուր չէ խտալական առածը՝
«ուր որ չէ նայում արեգակը, այնտեղ երևան է գալիս

բժիշկը: Սոհանոցը և վարձած բնակարանները պէտք է մէկը միւսից բաժանուած լինեն, իսկ այսպէս կոչուած «ընդունարան-սենեակները» վաղուց պիտի անհետանային: Անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել սենեակները տաքացնելու և նրանց ջերմութեան աստիճանի վրայ, որը R. 14⁰-ից բարձր չպիտի լինի. օդի աւելորդ չորութեան դէմ կարելի է կուել, կախելով թաց թաշկինակներ: Այս պայմանները բաւականաչափ թեթեւացնում են թոքախտաւորների հազը: Փոքրիկ երկաթեայ վառարանները չի կարելի օգտակար համարել, որովհետեւ նրանք կարմրում են և տարածում վնասակար գազեր: Բացի այդ, նրանց յաճախ գործածելը առաջ է բերում մեծ քանակութեամբ փոշի: Լաւ տաքացրած վառարանի մօտ կանգնելը աւելի վնասակար է, քան սառը օդում փոքր ինչ մնալը:

Ննջարաններ

Քաղաքակրթւած մարդը իւր կեանքի մի երրորդ մասը անց է կացնում ննջարանում. այդ պատճառով նրա համար աւելի նպատակայարմար է մեծ և լուսաւոր սենեակը: Սակայն մինչև օրս գոյութիւն ունի անխելացի մի սովորութիւն՝ ննջարանի համար ընտրել ամենամութ նկուղը: Ամենից խելացի կլինի ընտրել ամենամեծ լուսաւորւած սենեակը, եթէ մինչև անգամ այն սառը լինի: Մահճակալը պիտի լինի բոլորովին ազատ, ամեն տեսակ վարագոյրներ միանգամայն վնասակար են: Ամառը մահճակալը հարկաւոր է մօտեցնել պատուհանին: Հաստ վերմակները վնասակար են, որովհետեւ նրանք մարմնի գոլորշիացումներին արգելք են հանդիսանում և նպաստում են թոքախտաւորների գիշերային քրտնելուն: Ուշադրութեամբ պէտք է հետեւել օդի մաքրութեան, բանալով ցերեկը բոլոր պատուհանները: Մինչև անգամ գիշերը տարւայ լաւ եղանակներին մահճակալից հեռու գտնւող օգանցքը պիտի բաց մնայ: Ննջարանում աւելորդ կարասիներ չպիտի լինեն: Այդ սե-

նեակում կրկնակի անհրաժեշտ է խիստ և մշտական մաքրութիւն:

Յատակների խոնաւութիւնը

Անգլիայում յատակների խոնաւութեանը մեծ նշանակութիւն են տալիս (Buchanan): Ընդհանուր հաւասար պայմաններում թոքախտը ճանձային տեղերում աւելի լայն չափերով է տարածւում: Ներքնայարկերի բնակիչներն աւելի յաճախ են հիւանդանում (այս դէպքում բնակարանի նեղութիւնն էլ մեծ դեր է խաղում): Այս պատճառով բնակարաններ ընտրելու ժամանակ գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձնել նրա չորութեան վրայ: Շատ ցանկալի է, որ նրա տակը գետնայարկ լինէր: Սոնաւ պատերը, փոած պատուանները, սուսկերով պատած յատակները մի մի պատճառ են ներկայացնում մրսելու համար:

Հագուստ

Հագուստը պիտի միշտ բաւականին տաքացնի մարդու մարմինը, բայց միևնոյն ժամանակ նա պէտք է ազատ թողնի մարմնի գոլորշիացումները և շնչառութիւնը: Այս պատճառով պիտի խուսափել կօրսեաներից և րէզինի ծածկոցներից: Բրդէ գործւածքները սպիտակեղէնի համար անպէտք են, որովհետեւ քրտնքից և լացքից քրքրւում են և կեղտը նրանց վրայ քիչ է նկատւում: Ձեռներն ու ոտները պիտի պահել տաք և չոր: Եթէ ոտները քրտնում են կամ թրջւում, հարկաւոր է օրական երկու անգամ գուլպա փոխել, իսկ աւելի լաւ է փոխել իսկոյն և եթէ, հէնց որ խոնաւութիւն է զգացւում: Գլուխը և պարանոցը պիտի ազատ մնան: «Ոտներդ տաք պահիր, գլուխդ սառը, իսկ մարմինդ ազատ» — հին, սքանչելի առած է առողջութիւնը պահպանելու համար: Անհրաժեշտ է սպիտակեղէնը շուտ-շուտ փոխել, թրջւածը անմիջապէս վրայից զցել և

առհասարակ ամբողջ հագուստը ուղադրութեամբ մաքրել և յաճախ քամուն տալ: Յուրտ եղանակներին և բաց օդում մնալու համար հարկաւոր է տաք հագնել:

Օրգանիզմի դիմադրական ոյժի աւելացումը

Ամեն մարդ իւր ձեռքին ունի միջոց, որով նա կարող է տուբերկուլեօզից վարակման դէմ կռւելու մէջ յաղթող դուրս գալ: Դա շնչառական օրգանների ամրացումն է, որ կարելի է ձեռք բերել ջրի նպատակայարմար գործածութեամբ:

Բերանի մասերի խնամքը

Առաւօտները հարկաւոր է բերանը ողողել թարմ ջրով, նոյնը պիտի անել քթի հետ: Այդպիսով հաւաքւած փոշին անհետանում է և մաղսասային թաղանթները ստանում են առողջ գրգռումներ: Ուտելուց յետոյ բերանը կերակրի մնացածներից նոյնպէս պիտի մաքրել. շատ օգտաւէտ է ատամների մաքրութիւնը:

Մարմնի լացումը

Ոչ մի բան այնքան չի պաշտպանում մարդուս ցրտից, ինչքան մարմնի սիստեմատիկ լացումը սառը ջրով: Տարախտաբար շատերը մինչև օրս այս բանի հակառակն են համոզւած: Այս սխալ կարծիքը պիտի թողնել: Ոչ ոք իւր ննջարանից առաւօտները չպիտի դուրս գայ մինչև որ մարմնի վերին մասերը և ոտները չ'լանայ սառը ջրով և չըջորացնի: Այս նախազգուշութեանը կարող է դիմել ամեն ոք, որովհետև դրա համար հարկաւոր է միայն ջուր, բայց ի հարկէ բաւականին մեծ քանակութեամբ: Ուրեմն թողնենք այն փոքրիկ լացարանները, որոնք իրենց չափով մեծ չեն թէյամաններից: Ամեն մի ննջարանում պիտի

գտնւի բաւականաչափ մեծ աման: Սառը ջրով լացելը միաժամանակ լաւ ազդեցութիւն է ունենում կաշւի և շնչառական գործարանների վրայ: Ջրով սրսկելը ակամայ առաջ է բերում խորը շնչառութիւն, որի շնորհիւ թոքերը, որ քնած ժամանակ շատ մակերևոյթային են շնչում, ուղղում են հենց առաւօտանից և լցւում արիւնով:

Ժողովրդական բաղնիսներ

Կարելիին չափ տարածւած հասարակական մաքուր և էժան բաղնիսը տուբերկուլեօզի դէմ կռւելու համար ոչ պակաս լաւ միջոց է, քան բժշկական հիմնարկութիւնների կառուցումը: Այստեղ աւագանների և դուշի գոյութիւնը շատ է ցանկալի: Երեխաները ուսումնադրանական հասակում շաբաթը մէկ անգամ պիտի բաղնիս գնան, իսկ ամառը ամեն օր լողանան: Լողանալը և լողալը մի-մի հիւսալի միջոցներ են ջրերի և թոքերի զարգացման համար: Սակայն այս բոլոր ասածները վերաբերում են առողջ մարդկանց:

Հիւանդները և քնքոյշ մեծացածները մարմնի ամրապնդելուն պիտի դիմեն զգոյշ և փոքր առ փոքր: Սկզբում պիտի չոր կաշին ջրով տրորել, յետոյ չորացնել, իսկ յետոյ անցնել ֆրանսիական օդիով տրորելուն: Այդ օդին քիչ-քիչ պիտի փոխարինել սառը ջրով: Ի վերջոյ պէտք է սկսել սառը ջրով լանալ, դուշ գործածել և լողանալ: Այդպիսով ամենաքնքոյշ մեծացածները, որոնք առաջ շատ հեշտ էին մրսում, կարող են փոքր առ փոքր իրենց մարմինը շատ լաւ ամրապնդել:

Արձակուրդային գաղութներ և նաւ-ուսումնարաններ
(Вакаціонныя колоніі и корабли-школы).

Գեղձախտով (золотушный) տանջւող երեխաների ծնողների ուղադրութիւնը պիտի դարձնել այսպէս կոչւած՝ ար-

ձակուրդային գաղութների և նաւ-ուսումնարանների վրայ: Այստեղ վերականգնում են իրենց առողջութիւնը այն երեխաները, որոնք դժւար են առողջանում պլերիաից, թոքերի բորբոքումից, կարմրուկից, կօկլիւշից և ուրիշների փտելու հիւանդութիւններից յետոյ:

Մարմնի ամրապնդումը (закаливание)

Բժիշկները ամեն օր նկատում են, որ այն մարդիկ, որոնք վախում են եղանակների փոփոխութիւնից և ամենափոքր քամի փչելուց, ամենից շատ են ենթարկւած մրսելու և թոքերի ու շնչափողերի բորբոքման: Մարդու օրգանիզմը հիանալի կերպով կարող է տանել եղանակի փոփոխելը և անտեղի զգուշութիւնն է, որ թուլացնում է օրգանիզմի այդ օգտաւէտ ընդունակութիւնը: Յուրաքանչեւ տուբերկուլեօզին չի նպաստում, ինչպէս այդ յաճախ սխալմամբ կարծում են: Իսլանդիայի բնակիչների մէջ մենք նկատում ենք հիւանդութեան համարեա թէ բացակայութիւնը: Այդ պատճառով մեզ և ուրիշներին պիտի սովորեցնենք կանոնաւոր կերպով օգտւել թարմ օդից տարւայ ամեն ժամանակ: Թոյլ կրճքի տէր մարդկանց հարկաւոր է տանը նստել, երբ դուրսը սաստիկ քամի է, որովհետեւ վերջինը չորացնում է օդը և մեծ քանակութեամբ փոշի է առաջացնում:

Մարմնի դիւրիք

Մարմնի կռացած դիրքը արգելում է հանգիստ և կանոնաւոր շնչառութիւնը, որ մեծ նշանակութիւն ունի թոքերի առողջութեան համար: Օգտակար կլինէր ամենքին յիշեցնել զինուորական կանոնը՝ «գլուխդ բարձր, կուրծքդ առաջ»: Սակայն կանոնաւոր շնչելը մի իսկական արեւստ է: Պիտի շնչել ոչ թէ բերանով, այլ քթով, որպէսզի օդը, տաքանալով և ազատւելով նրա մէջ գտնուող փոշուց, չը-

կարողանայ գրգռել շնչառական խորը գտնուող ուղիները: Մարմնի ուժեղ շարժւածքների ժամանակ և քամու դէմ խօսելը ևս մնասակար է:

Շնչառութեան դժուարացումը

Բերանի և քթի մասերում առաջացած պօլիպները դժւարացնում են շնչառութիւնը: Դրա հետեանքը կարող է լինել շնչառական օրգանների բորբոքումը և մինչև անգամ կրճքի վանդակի թուլութիւնը: Այն երեխաներին, որոնք բացառապէս բերնով են շնչում, անմիջապէս պիտի բժշկին ցոյց տալ:

Պարապմունքի ընտրութիւնը

Մասնաւոր կեանքում, երբ ընտրում են ծառայութեան այս կամ այն ձևը — պարապմունքը, շատ քիչ են ուշադրութիւն դարձնում առողջութեան վրայ: Պետութիւնը շատ խելացի կվարէր, եթէ իւր պաշտօնեաներից առողջութեան վկայական պահանջէր:

Այն երիտասարդները, որոնք ժառանգաբար վարակւած են տուբերկուլեօզով, մասնաւոր թոյլ կուրծք ունեցողները, չպիտի պարապեն այն պրօֆէսիաներով, որոնք յիշւած են 26-րդ երեսում: Այդպիսի օրգանիզմների համար աւելի յարմար են բացօդեայ պարապմունքները և այնպիսիները, որոնք ֆիզիկական բոլոր լարում չեն պահանջում, ինչպէս օրինակ՝ այգեգործութիւն, անտառապահութիւն, երկրագործութիւն և այլն:

Ուժեղ, բայց գեղձախտաւոր երեխաների համար, որոնք տանջւում են կաշւի քորով, ականջների հոսումով և այլն, ծովային ծառայութիւնը աւելի յարմար է, բայց իսկական նաւաստիի և ոչ թէ հնոցավառի կամ մեքենավարի ծառայութիւնը: Մի քանի տարի ծառայելուց յետոյ՝ նրանցից դուրս են գալիս առողջ աղամարդիկ: Ծո-

վային զինւոր հաւաքելու ժամանակ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այս բանի վրայ:

Պիտի մատնացոյց անել և այն հոսանքը, որ նկատուում է գիւղերից դէպի քաղաք: Մարդիկ, որ տրամադրուած են դէպի տուբերկուլեօզը, մեծ մասամբ ունեն աշխոյժ բնաւորութիւն և գտնելով կեանքը գիւղում աւելի դժւար, վազում են դէպի կենտրոնական քաղաքներ: Բայց միևնոյն ժամանակ ազգաբնակչութեան աւելանալը և աշխատանքի դժւարութիւնը, որ իւր հերթին ազդում է սննդւելու վրայ, մեծացնում են տուբերկուլեօզով վարակւելու վտանգը քաղաքացիների համար:

Ընդհանուր վսանգաւոր պայմանները

Ժողովրդի մէջ մի շարք արմատացած սովորութիւններ նպաստում են տուբերկուլեօզի տարածման, մի կողմից թուլացնելով օրգանիզմի դիմադրական ոյժը, միւս կողմից կրկնակի հնարաւորութիւն տալով սաղմերին թափանցել օրգանիզմի մէջ:

Պանդոկների կեանք

Այստեղ հարկաւոր է յիշել այն հին և վատ սովորութիւնը, որ մարդիկ իրենց ամբողջ հանգստութեան ժամանակը՝ անց են կայնում ծխով լի և կեղտոտ պանդոկներում: Եղանակի ամենալաւ ժամանակը մարդիկ ժամերով նստում են այնտեղ, մինչդեռ թարմ օդում նրանք կարող էին նոր ոյժեր հաւաքել, կարծես թարմ օդի արժէքը նրանց համար ոչինչ է: Ինչ տխուր երևոյթ է տեսնել, թէ ինչպէս բանւորները կիւրակի օրերը մինչև կէս գիշեր նստում են այդ կեղտոտ և տաք սենեակներում և վերադառնում են տուն ցուրտ և խոնավ լուսաբացին: Տրակտիրներում վատնւում է և՛ ժամանակ և՛ փող, բայց ամենից շատ տուժում են առողջութիւնը և ընտանեկան

երջանկութիւնը: Պետութիւնից պահանջւում է աւելի կրտուկ օրէնսդրութիւն արբեցողութեան դէմ և խիստ հսկողութիւն ոգելից խմիչքների ծախելու վրայ, մանաւանդ երբ ծախւում է երիտասարդներին:

Անհրաժեշտ է պատանեկութեան մէջ պրօպագանդ մղել արբեցողութեան դէմ և աւելի գունաւոր կերպով ցոյց տալ նրա տխուր հետեանքները:

Ուսումնարաններ

Ուսումնարան յաճախելու վտանգը կարելի է հեռացնել յաճախակի և նպատակաշարժար մաքրութեամբ: Նախ և առաջ պիտի պահանջել, որ երեխաները ոտների ցեխը մաքրեն երկաթեայ քերիչով, վերնագգեստը թողնեն նախասենեակում և պարապմունքների ժամանակ մարմինն ուղիղ դիրք տան:

Թոքախտաւորները ուսումնարան չպիտի թողնեն: Առողջացողների վաղաժամ յաճախումը դպրոց նոյնպէս կարող է ֆուսակար լինել: Ուսումնարանի ամենանշանաւոր հարցերից մէկը պիտի լինի՝ ներշնչել երեխաներին պահպանել իրենց առողջութիւնը և այդ ներշնչումը պիտի լինի այնպէս, որ նրանք ընդմիշտ յիշեն այդ: Հարկաւոր է նրանց մէջ զարգացնել առողջութեան գիտակցութիւն, որպէսզի նրանք պարտք համարէին հսկել ոչ միայն իրենց, այլ և ուրիշների առողջութեան վրայ: Տարաբախտաբար այս ուղղութեամբ շատ քիչ բան է արած: Արժանի է օրինակ վերցնել Շվեյցարական ուսուցիչների և քահանաների առողջապահական-կրթական սիստեմից, որ ընդունւած է շատ կանոններում: Առողջութիւնը ժողովրդականացրած ձևերով կարող էին դասաւանդել բժիշկները, որովհետև նրանք ծանօթ են ժողովրդի սովորութիւններին և նախապաշարմունքներին:

Եկեղեցիներ

Մեզ, բժիշկներին լաւ յայտնի է, որ մի քանի պաշտօնականներու եկեղեցի յաճախելը տուբերկուլեօզի տարածման մի ֆակտոր կարող է լինել։ Տուբերկուլեօզային կօնգրէսում պրօֆ. Fillügge մատնանիշ արեց այդ հանգամանքի վրայ։

Եկեղեցիներում օդը մեծ մասամբ լինում է հեղձուցիչ և ցուրտ. ծնրադրութեան ժամանակ բաւական փոշի է բարձրանում, երբ յետոյ շնչում են աղօթողները։ Թոքախտաւորները աւելի շատ են յաճախում եկեղեցի և այնտեղ ուժգին կերպով տարածում իրենց հիւանդութեան սաղմերը, որովհետեւ վատ օդը նրանց ստիպում է հագար։ Բացի այդ, յաճախ մարդիկ մտնում են եկեղեցի տաքացած և թրջւած։ Որոշ օրերի եկեղեցական կանոնները պահանջում են, որ աղօթողները եկեղեցի գնան ծոմ պահած։ Որ այսպիսի պայմաններում օրգանիզմը աւելի է ենթարկւում տուբերկուլեօզին, դրանում ոչ ոք չի կասկածի։ Բայց միթէ հոգևորականութեան համար դժուար կլինի ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրայ և հոգ տանել, որպէսզի եկեղեցիները շուտ շուտ քամու տրեն և մաքրեն։ Դրանով նրանք թոքախտաւորներին և առողջացողներին զգուշացրած կլինեն աւելորդ յաճախումներէ։ Թուլակազմ երեխաներին, մանուկն ու ձուկը, փառասկար է ծռնել չօքել եկեղեցու ստոր սալաշատակին։

Դիակասներ

Հարկաւոր է ամենուրեք ունենալ դիակասներ։ Երբ նրանք բացակայում են, այն սենեակը, որտեղ մեռնող է եղել, երբէք հիմնական ախտահանութեան չի ենթարկւում, մինչև որ մեռնողի դիակը դուրս չի հանւում։ Միևնոյն ժամանակ գիշերային հակումները, որ ընդունւած են շատ

տեղեր, պիտի թողնել։ Հազարաւոր դէպքեր են եղել, երբ երիտասարդ օրգանիզմներ դիակներից ընդունել են մահացուցիչ սաղմերը։ Դիակներ համբուրելը պիտի խիստ արգելել։

Երկաթուղիներ

Երկաթուղու գծերի վրայ տուբերկուլեօզի դէմ պիտի ամեն միջոց ձեռք առնել։ Նախ և առաջ կուպէնների թաշեայ կտորների տեղ պիտի գործածել այնպիսիները, որ կարելի լինի լւանալ։

VI

ԱՆՀՐԱԺԵՇ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՅՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆԲ ՄՇՏԱՊԵՍ ԵՆԹԱՐԿԻԱԾ ԵՆ ՎԱՐԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԻՆ

Տուբերկուլեօզի դէմ կուելու յիշեալ միջոցները առանձնապէս այն մարդկանց ուշադրութիւնը պիտի դրուեն, որոնց պարապմունքը նպաստում է այդ հիւանդութեան ծագման (եր. 26)։ Աւելի պարզելու համար համառօտ կերպով յիշենք նախազգուշութեան անհրաժեշտ միջոցները՝

- 1) Հեռացնել թոքախտաւորներին բանւորների հանրակացարաններից։
- 2) Թաքմանների անհրաժեշտ թիւը. նրանցից պիտի օգտւեն թէ հիւանդները և թէ առողջները։
- 3) Արհեստանոցները շուտ շուտ մաքրել, իսկ պարապմունքներից ազատ ժամանակ քամու տալ։ Արհեստաւորները, ինչպէս ընդունւած է Իտալիայում, տաք եղանակներին պիտի աշխատեն իրենց տան դռան առաջ կամ այգում։
- 4) Արհեստանոցում չուտել և ժամանակ չանցկացնել։

5) Գործի ժամանակ մարմինն ըստ կարելւոյն ուղիղ դիրք տալ:

6) Այն վնասը, որ ստացւում է պարապմունքներից, վարձատրել համապատասխան սպորտով-զւարճութիւններով՝ թիավարել, սար բարձրանալ, զբօսնել, բաց օդում խաղալ և այլն: Շնչառական օրգանների սխտեմատիկ և կանոնաւոր մարզումները: Յաճախ հարկաւոր է հետեւեալն անել՝ ձեռքերը դնելով ազդրերի վրայ մի քանի անգամ խորը ներշնչել և դուրս շնչել:

7) Առողջ բնակարան և գլխաւորապէս արձակ ու մաքուր ննջարան: Փոշի ընդունող թաւշեայ կարասիների, գորգերի, վարագոյրների տեղ օգտուել փայտեայ և կաշէ կարասիներով և առհասարակ այնպիսի առարկաներ գործածել, որոնց լւանալը հեշտ լինի:

8) Անձնական մաքրութիւն և մարմնի ամրապնդում:

9) Հարկաւոր է անմիջապէս բժշկի դիմել հիւանդութեան նոյնիսկ ամենաթոյլ նշաններին: Առողջացողները պիտի առանձին զգուշութիւն պահպանեն:

VII

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԵՕՋԸ ԲՈՒԺԵԼԻ Է

Շատ քիչ ժամանակ է անցել, երբ «տուբերկուլեօզ» դիագնօզը բոլորի համար մահաւան դատաւճիռ էր, որը շուտով պիտի կատարւէր: Բայց բժիշկներին նոյնպէս վաղուց յայտնի էր, թէ նրանից խուսափել կարելի է, թէ որոշ պայմաններում նա բժշկւում է և այս բանը խրախուսում է մեզ ներում նա բժշկւում է և այս բանը խրախուսում է մեզ շարունակելու համար կռիւն չարիքի դէմ: Վիրաբոյժները ամեն ժամանակ տուբերկուլեօզից վարակւած յօդերը չեն անդամահատում, այլ բժշկում են նրանց և ուրիշ միջոցներով: Դիակների բացումը ցոյց տւեց, որ զանազան հիւանդութիւններից մեռնողների թոքերում գտնւում են որոշ մասեր, որոնք բժշկւած են տուբերկուլեօզից: Breh-

mer-ի և Dettweiler-ի, սանատորիայի առաջին հիմնադիրների, մեծ գործն այն եղաւ, որ նրանք միշտ քարոզում էին, թէ տուբերկուլեօզը կարելի է բժշկել: Բարեբախտաբար այս համոզումը ժողովրդի մէջ աւելի և աւելի է տարածւում:

Որ թոքախտը իսկապէս կարելի է բժշկել, այդ ցոյց է տալիս Schaper-ի հետեւեալ թւերը. Բերլինի Charité հիւանդանոցում հիւանդների 44,9—55,6%—ը բժշկւում էին կամ որոշ թեթեւութիւն ստանում: Մինչդեռ հիւանդանոցներում գլխաւորապէս գործ եւ ունենում ծանր հիւանդների հետ, այդ պատճառով միտք չունի հիւանդից ծածկել ճշմարտութիւնը նրա հիւանդութեան մասին: Ծածկելը այն արդիւնքը կունենայ, որ հիւանդը կսկսի քիչ ուշադրութիւն դարձնել այն միջոցների վրայ, որոնք գործ են դրւում նրա առողջութեան համար և պաշտպանելու են վարակումից նրա շրջապատողներին:

Հիւանդութեան նշանները

Բժշկութեան յաջողութիւնը նախ և առաջ կախւած է հիւանդութեան նախօրօք իմանալուց: Սակայն, ինչքան էլ տուբերկուլեօզը յաճախ պատահի, հիւանդութեան պրօցէսի սկզբում նրա դիագնօզը այնքան էլ հեշտ չէ որոշել: Նրա առաջին նշանները շատ անորոշ են և հիւանդը կարող է կամ բոլորովին ուշադրութիւն չդարձնել նրանց վրայ, կամ վերագրել մարմնի միւս օրգաններին՝ օրինակ ստամոքսին: Որպէս կասկածաւոր նշաններ, մանաւանդ հիւանդութեանը արամադրւածների վերաբերութեամբ պիտի ընդունել՝ ընդհանուր թուլութիւնը, դէմքի վատ տեսքը, ստամոքսի մէջ սեղմումները, բրկոյնները, խռպոտ, խզխզոյ ձայնը, ջերմը երեկոներին, արագ ցարկերակը, արիւն թքելը և կանանց համար ամսականի խանգարումը: Միայն բժիշկը կարող է այս երևոյթների պատճառներն իմանալ: Եթէ կպարզւի, որ իսկապէս թոքախտի հետ

գործ ունենք, հարկաւոր է, որ հիւանդը հաւատ ընծայէ բժշկին: Նա չպիտի իհարկէ պահանջի, որ հիւանդութիւնը մի քանի շիշ դեղերով բժշկուի: Պիտի հրաժարուի այն մըտքից, թէ թոքախտի դէմ գոյութիւն ունի որեւէ հաստատուելի: Մեր ձգտումը կարող է ուղղւած լինել դէպի այն, որպէսզի հեռացեն բոլոր փնտաւար ազդեցութիւնները և կարելի լինի ամեն հնարաւոր միջոցներով պաշտպանել օրգանիզմը: Սակայն շատ յաճախ հիւանդները չեն ցանկանում հասկանալ այդ և դնում են շարլատանի մօտ, որը նրան խոստանում է իսկոյն և եթ բժշկել: Բայց ժամանակն անցնում է, բարենպաստ մօմէնտը կորչում է և խելացիութիւնը շատ ուշ է երևան գալիս:

Բժշկութիւնը ամեն մի առանձին դէպքում ունի իր ուրոյն ընթացքը և պիտի տարւի բժշկի ղեկավարութեամբ: Շատ հեղինակաւոր մարդկանց կարծիքով, ինչպէս օրինակ Krause-ի, Bandelier-ի, Габрилович-ի, Roepke-ի, Spengler-ի, Löwenstein-ի, Sahle-ի և շատ ուրիշների, ամենալաւ հետեւանքների կարելի է հասնել տուբերկուլինների սրսկումներով և «գիգիէնօ-գիէտետիկ» միջոցով: Այստեղ գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է լաւ կերակրելու և արտաքին բարենպաստ պայմանների վրայ:

Թոքերով հիւանդների սանատորիաներ

Ներկայումս սանատորիաներ շինելու հարցն առաջին հուպատարութեան առարկան է: Այս դէպքում երեք նպատակ է դրւած.

- 1) Բժշկել հիւանդներին.
- 2) Նրանց հեռացնել առողջներից, որպէսզի հիւանդութիւնը չտարածւի.
- 3) Սովորեցնել հիւանդներին վարել առողջ կեանք, որպիսին նրանք կարող են քարոզել հիմնարկութիւնից դուրս գալուց յետոյ:

Զի կարելի չ'ողջունել նոր սանատորիաների բացւելը,

մանաւանդ էժան և ձրի սանատորիաները. չէ՞ որ նրանց թիւը եթէ մի տասն անգամ էլ շատացնենք, այն ժամանակ էլի շատ քիչ կլինէր, եթէ աչքի առաջ ունենանք թոքախտաւորների այն հսկայական կօնտինգենտը, որը մեծ կարիք ունի նրանց:

1910 թւի Մոսկւայի հակաթոքախտային համագումարում ուռւ թոքախտաւորների մեծ մասը այն կարծիքի էր, որ աւելի նպատակաշարժար է թոքախտաւորներին բժշկել հիւանդանոց-սանատորիաներում, որից յետոյ բժշկութիւնը շարունակել երթեկների բուժարաններում, աչքի առաջ ունենալով, որ բաւարար թւով մեծածախս սանատորիաներ կառուցանելը մեր երկրի միջոցներից վեր բան է և շատ կողմերից չէ համապատասխանում մեր ժողովրդի մեծամասնութեան կեանքի պայմաններին: Քաղաքների շրջակայքում յատուկ կազմակերպած սանատորիա-հիւանդանոցները, որոնք մտաչելի են հիւանդների բժշկութեան թոքախտի զարգացման ամեն շրջաններում և կարող են կառուցւել քաղաքի ծայրերում, աւելի փոքր ծախքով կարող են մօտաւորապէս բժշկութեան նոյն հետեւանքներն ունենալ, ինչ որ սանատորիաներում:

Ես վերոյիշեալ համագումարում, ինչպէս թոքախտի դէմ մաքառող Կովկասեան հակաթոքախտային ընկերութեան պատգամաւոր, թէպէտ Երասթումանում սանատորիա հիմնելու գաղափարը պաշտպանեցի, բայց աչքի առաջ ունենալով Գերմանիայի քսանամեայ փորձի հետեւանքները, պէտք է խոստովանեմ, որ տուբերկուլեօզից երկիրն ազատելու (այսինքն բառիս ընդարձակ մտքով՝ հասարակական մաքառման) տեսակէտից՝ ներկայումս սանատորիաներին մեծ նշանակութիւն վերագրել, հակառակ նախկին ակնկալութիւններին, անհնար է. ինչպէս բժշկական հիմնարկութիւններ, ժողովրդական սանատորիաները ինքն ըստ ինքեան շատ քիչ բան են տալիս և միայն մի շարք ուրիշ հակատուբերկուլեօզային հիմնարկութիւնների հետ, ինչպէս մի առանձին օղակ միջոցների ամբողջ շարքի մէջ, նրանք

իրաւամբ ստանում են իրենց պատկանող խոշոր նշանակութիւնը:

Գերմանիայում վաղուց արդէն պարզւած է, որ մեծ մասամբ, սանատորիայից դուրս գալուց յետոյ, չի կարելի հիւանդին իր կեանքի նախկին պայմանների և աշխատանքի մէջ թողնել, որ անհրաժեշտ է մի առժամանակ նրան այսպէս ասած՝ *Übergangszeit* (անցողական շրջան) անցկացնել տալ, երբ նա սանատորիայում ոչինչ չանելուց աստիճանաբար անցնում է աշխատանքի՝ այսպէս կոչւած՝ *Waldstation, Erholungsheim*-ում:

Այնուհետեւ ակներեւ եղաւ, որ անհրաժեշտ է հիւանդի բժշկութեան ամբողջ ժամանակամիջոցում բաւարար չափով ապահովել նրա ընտանիքը, որովհետեւ առանց սրան հիւանդը զրկւում է հոգեկան հանգստութիւնից, լաւ չէ բժշկւում և վաղաժամ ընդհատում է բժշկութիւնը:

Թոքախտաւորներին օգնելու բոլոր զանազան տեսակները Գերմանիայում իրականանում են մի շարք առանձին առանձին հիմնարկութիւններով (պետական հիմնարկութիւններ, մասնաւոր ապահովագրող ընկերութիւններ, հիւանդանոցային և ինվալիդային գրամարկդներ, «Կարմիր խաչի ընկերութիւն», մասնաւոր բարեգործութիւններ և այլն, և այլն), որոնց չի կարելի շտաով իրագործւած տեսնել մեզ մօտ՝ Ռուսաստանում:

Բացի դրանից, փորձը ցոյց է աւել, որ յատուկ հիւանդանոցներում և նոյն իսկ տանը թոքախտաւորները պակաս չեն բժշկւում, քան սանատորիաներում և որ առհասարակ բժշկութեան վերջնական յաջողութիւնը կախւած է ոչ այնքան սանատորիաներում ստացուած անմիջական յաջողութիւնից, որքան ընտանեկան վիճակի այն պայմաններից, որոնց մէջ ապրում և աշխատում է այնուհետեւ հիւանդը: Ներկայումս հասարակական գործիչների ուշադրութիւնը սանատորիաներից անցնում է դէպի հիւանդանոց-սանատորիաները և «թոքախտով հիւանդների խնամակալութիւնները», որոնք հաւաքում են թոքախտաւոր-

ներին, տեղաւորում հիւանդանոցներում, նիւթապէս օգնում և՛ հիւանդներին, և՛ նրանց ընտանիքներին, հոգում ընակարանային պայմանները բարեփոխելու մասին և այլն, և այլն:

Իսկ մեզ մօտ, Կովկասում, չնայած թոքախտով մեռնողներին անագին տոկոսին, հասարակական օգնութիւնը թոքախտաւորներին՝ իսպառ բացակայում է: Միմիայն թիֆլիսում իւրաքանչիւր տարի 500 մարդ է մեռնում թոքախտից՝ զարհուրելի պայմաններում, համարեա փողոցում, որովհետեւ թոքախտաւորների համար մեր հիւանդանոցների դռները փակ են: Այս օրերս թոքախտով ծանր հիւանդ Պրօսկոբնի մի հիւանդանոցից միւսն էին տանում, ամեն անգամ էլ մերժեցին ընդունել, մինչև որ խղճալին մեր բարեգործների աչքի առաջ վախճանւեց՝ համարեա փողոցում՝ զարհուրելի պայմանների մէջ:

Մինչդեռ Ռուսաստանի շատ քաղաքներում զգալով իրենց բարոյական պարտականութիւնը՝ ապահովել բժշկութիւնը իրենց թոքախտաւոր քաղաքացիներին՝ հիւանդանոց-սանատորիաներ են հիմնում թոքախտաւորների համար, ինչպէս Մոսկւան, Պետերբուրգը և շատ զեմստովոներ, — մեր քաղաքի հայրերը իրենց հայեացքն ուղղել են Աբասթումանի սանատորիայի վրայ, ուր բժշկութիւնը մատչելի պիտի լինի միմիայն ապահովւած մարդկանց աննշան խմբին, իսկ մասսան, բուն ժողովուրդը պէտք է բաւականանայ բժշկութեան փշրանքներով — զանազան ղեղատնային միջոցներով:

Ֆրանկֆուրտի մօտ Falkenstein սանատորիա-հիւանդանոցում Dettweiler-ը փայլուն կերպով ապացուցեց, որ թոքախտը բժշկւում է ամեն տեղ, ամեն կլիմայում և ամեն երկրում: Նրա բժշկութեան հետեւնեքներն այնքան համոզիչ էին, որ լեռնային կլիման կորցրեց իր գերակշռող նշանակութիւնը և նկատուեց ինչպէս երկրորդական պայմաններից մէկը: Ներկայումս Գերմանիայում գոյութիւն ունեն մի շարք սանատորիաներ, կառուցւած քաղաքների

շրջակայքում (Loslau Սլոսլաւայում, Planneg Բաւարիայում, Belzig Բելզիկ մօտ), որոնք բժշկութեան հետեւանքներն կողմից յետ չեն քննում լեռնային կայարաններից:

Ամփոփելով բոլոր ասածներս, ես ինձ թոյլ եմ տալիս հետեւեալ ցանկութիւնը արտայայտել. 'ի նկատի առնելով, որ մեր Թիֆլիս քաղաքի վրայ էլ պարտականութիւն կայ կանոնաւորել իր թոքախտաւոր հիւանդ քաղաքացիների բժշկութեան գործը, անհրաժեշտ է, որ մեր քաղաքն էլ ձեռնարկէ հիմնել Թիֆլիսի շրջակայքում յատուկ հիւանդանոց-սանատորիա՝ իր հիւանդ քաղաքացիների բժշկութեան համար թոքախտի դարգացման ամեն շրջանի հանդէպ:

Եթէ Կովկասեան հակաթոքախտային ընկերութիւնը իրան նպատակ է դրել ամենալայն մտքով հասարակական կռիւ մղել, այսինքն աշխատել թոքախտը արմատախիլ առնել Կովկասում, և եթէ չէ կամենում, որ ընկերութիւնը ծառայէ միմիայն մի խումբ համեմատաբար ազատուած թոքախտաւորներին, ապա ուրեմն աւելի նպատակաւոր մար կլինէր, որ Աբասթուանում շինուող սանատորիան յանուն 'ի տէր հանգուցեալ թաղաժառանգ և Մեծ Իշխան Գէորգի Ալէքսանդրովիչի՝ այժմէն իսկ յանձնէր կառավարութեան, իսկ կոպէկ-կոպէկ ժողոված փողը, զեմստօյնին համայնքների օրինակով, քաղաքի հետ միասին գործադրէր Թիֆլիսի շրջակայքում յատուկ մի հիւանդանոց-սանատորիայի կառուցման վրայ թոքախտաւորների համար: Այդ դէպքում Կովկասեան հակաթոքախտային ընկերութիւնը կարող էր լայն տարածել իր գործունէութիւնը. այդտեղ հիւանդանոցին կից կարելի էր յարմարեցնել և յատուկ բուժարան՝ երթեկ թոքախտաւորների համար, և խնամակալութիւն:

Իսկ եթէ Կովկասեան հակաթոքախտային ընկերութիւնը ինչ էլ որ լինի ցանկանայ սանատորիա ունենալ ոչ Թիֆլիսի շրջակայքում, այն ժամանակ աւելի լաւ չէր լինի զիմել յայտնի բարեգործ Սմէցկոյին, որը հաւանորէն

ուրախութեամբ կյանձնէր թոքախտի դէմ մաքառող Կովկասեան ընկերութեան իր երկու հսկայական սանատորիաները «Գուլրիպշը» և «Ապուձերան»: 1911 թւի սեպտեմբերին, Սուխումից անցնելիս, սանատորիական բժիշկներն ասացին ինձ, որ ծերունի Սմէցկոյի մահից յետոյ նրա ժառանգները զժառ թէ կամենան այդ սանատորիաներին տարեկան 30.000 ռ. դէֆիցիտը վճարել: Դեռ քիչ առաջ Սմէցկոն իր սանատորիաները ցանկացաւ նւիրել Մոսկւային, բայց քաղաքը հրաժարւեց ընդունել այդ նւերը, որովհետեւ ինքը հիւանդանոց-սանատորիա է կառուցանում թոքախտաւորների համար Մոսկւայի շրջակայքում:

Բժիշկներից մի քանիսը պաշտպանում են այն կարծիքը, որ հիւանդանոց-սանատորիաներ շինելու համար հաւաքած փողերը ծախսեն ժողովրդական կեանքի առողջապահական պայմանները բարեփոխելու համար: Այս սկզբունքը նրանք պաշտպանում են այն հիման վրայ, որ ոչ մի բարելաւում, որ տրւում է հիւանդին սանատորիայում, չէ կարող հաստատուն լինել, որովհետեւ հիւանդը միշտ կվերադառնայ կեանքի նախկին ծանր պայմաններին: Իսկ ժողովրդական կեանքի առողջապահական պայմանները բարեփոխելու համար շատ օգտակար կարող էին լինել հասարակութեան բոլոր խաւերի կողմից կազմակերպւած միջնորդ բիւրօները, որոնց նպատակը կլինէր աշխատանք հայթայթել:

Այսպիսով՝ չբացասելով սանատորիաների հսկայական նշանակութիւնը, մենք կարող ենք ասել, որ թոքախտի դէմ կռիւն առողջապահական և հասարակական պայմանների բարելաւումը կտայ հիմնական արդիւնք:

Այստեղ բացւում է լայն ասպարէզ, որտեղ խելացի և բարերար գործունէութիւնը, հիւանդների լուրջ վերաբերմունքն ու հնազանդութիւնը, բժիշկների համութիւնն ու խրատները միանալով և կազմելով մի ընդհանուր ոյժ, կարող կլինեն հիւանդի արդիւնք տալ:

Պետութիւնը, հասարակութիւնը, առանձին անհա-
տները, բոլորը-բոլորը պիտի ձգտեն այս միժ նպատակին
և այն ժամանակ մեր այս դարում կարող կլինենք տօնել
տուբերկուլեօգի դէմ յաղթանակը, որպէս հասարակական
մի ախտի:

4692



ՀՀ Ազգային գրադարան



NL0271899

ԲԺՊ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՅԻ

ՏԳԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Туберкулезъ кишекъ, какъ первичное заболѣваніе
цѣна (սպառում է) 75 ր.
2. Туберкулезъ и общедоступныя мѣры для борьбы
съ нимъ, цѣна 25 ր.
3. Meningitis tuberculosa на нѣмецкомъ языкѣ цѣна
4 мар. (սպառում է)
4. Противотуберкулезный съѣздъ въ Москвѣ въ 1910 г.
5. ՅԼՄԺԹ և պեղանալու ինքն-միտքով լուսնային ժամանակ
մեջ սառնակներով 30 ր.
6. Տուբերկուլոզի և նրա դեմ կուրսի և հանրա-
մատչելի միջոցներ 30 ր.

Վաճառում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մոտ

Գրավաճառներին 25⁰ զեղծ

Հրատարակութիւնների պահեստը, Թիֆլիս, Մուրադ, Բեհրուդեան
փողոց N 23. Հեռախոս 7—92.

Նոյնանոց հիւանդների ընդունելութիւն Ներքին, անմեծագույն

ԿՐԺՈՒԹ, ԹՈՒՄԱՆՅԻ և ՄՐՏԻ ֆրանսիացիների.

Ամեն օր առ. 9—12, երեկ. 5—7.

Ամառը կիսալուսնային.